ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2006

ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

2007

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Ֆինանսական համակարգի վերահսկողությունը և կարգավորումը 6

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխությունները 16

Վերահսկողությունը 2006 թվականին 30

Կադրերի վերապատրաստումը և համագործակցությունը այլ երկրների վերահսկողների հետ 33

ՀՀ ֆինանսական համակարգը 2006 թվականին

ՀՀ բանկային համակարգը 35

Ընդհանուր դրույթներ 35

Բանկային համակարգի կապիտալը 37

Բանկային համակարգի պարտավորությունները 39

Բանկային համակարգի ակտիվները 43

Բանկային համակարգի ֆինանսական արդյունքները 49

Բանկային համակարգի ֆինանսական ռիսկերը 52

ՀՀ ֆինանսական շուկայի այլ մասնակիցներ 57

ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները 57

ՀՀ ապահովագրական շուկան 58

ՀՀ արժեթղթերի շուկան 59

ՀՀ տարածքում գործող գրավատները 61

Արտարժույթի առք ու վաճառքի փոխանակման կետերը և արժութային դիլերները ... 61

Դրամական փոխանցումներ և վճարային գործիքներ ու վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպություններ 62

Վճարահաշվարկային համակարգ 64

Վերահսկողության զարգացման հեռանկարները 68

Հավելվածներ 75

ՆԱԽԱԲԱՆ

2006 թվականի հունվարի 1-ից ՀՀ կենտրոնական բանկը ստանձնեց Հայաստանի ֆինանսական հատվածի կարգավորումն ու վերահսկողությունը: Աշխարհում ֆինանսական համակարգի զարգացումներին բնորոշ են բանկային, ապահովագրական և արժեթղթերով գործունեությունների մերձեցման միտումները: Միասնական վերահսկողական մարմնի ստեղծման հիմնական դրդապատճառը ֆինանսական շուկայում ընդհանուր ռիսկերի վերահսկումն էր: Արդիական խնդիր էր դարձել ֆինանսական շուկայի զարգացման միտումների համալիր վերահսկողությունը, ֆինանսական շուկայի տարբեր հատվածներին բնորոշ ռիսկերի գնահատումը, ինչպես նաև ընդհանուր ֆինանսական համակարգի զարգացումների վրա առանձին ֆինանսական շուկաներում, ինստիտուտներում և ենթակառուցվածքներում ծագող ռիսկերի ազդեցության գնահատումը:

Ներկայումս բանկային ակտիվների մեծությունը կազմում է ֆինանսական համակարգի համընդհանուր ակտիվների մեծության մոտ 93%-ը: Սակայն էապես կարևորվում է նաև ոչ բանկ ֆինանսական ինստիտուտների (առավելապես ապահովագրության և արժեթղթերի շուկաների)՝ բանկային համակարգին համահունչ զարգացումների նախադրյալների ստեղծումը: Կարգավորման և վերահսկողության հետագա զարգացման հեռանկարների տեսանկյունից 2006 թվականին Կենտրոնական բանկի կարևորագույն շեշտադրումը եղել է ապահովագրության և արժեթղթերի շուկաների զարգացման քաղաքականության վերաիմաստավորումը: Մշակվել են ՀՀ-ում ապահովագրության և արժեթղթերի շուկաների զարգացման հայեցակարգային մոտեցումներ, որոնք իրենց արտացոլումն են գտել նաև «Ապահովագրության մասին» և «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքներում կատարված փոփոխություններում: Իր հերթին, նշված հայեցակարգային մոտեցումների հիման վրա ձևավորվում են նաև ապահովագրական և արժեթղթերի հատվածների կարգավորման և վերահսկողության ենթաօրենսդրական դաշտերը:

Քանի որ ներկայումս ՀՀ ֆինանսական շուկայի կարևորագույն մասնակիցներն են առևտրային բանկերը՝ տվյալ նյութում հիմնական շեշտադրումը կատարվում է բանկային համակարգի վրա:

Ընդհանուր առմամբ, 2006 թվականին մակրոտնտեսական միջավայրում դարձյալ շարունակվել են վերջին տարիներին ձևավորված կայուն զարգացման միտումները, որոնք բարենպաստ ազդեցություն են ունեցել նաև բանկային համակարգի զարգացումների վրա:

Չնայած հաշվետու տարում բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը չի փոփոխվել՝ կազմելով 19.8%, սակայն բանկային համակարգի կողմից տրա-

մադրված վարկերի արագընթաց աճի պայմաններում «վարկեր/ՀՆԱ» հարաբերակցությունը ավելացել է 0.3 տոկոսային կետով և կազմել 8.6%: Տնտեսության կայուն զարգացման պայմաններում ՀՀ ֆինանսական համակարգը ընդարձակման ու խոշորացման բավականաչափ ներուժ ունի, սակայն ներկայումս ֆինանսական միջնորդության մակարդակը Հայաստանի Հանրապետությունում դեռևս խիստ ցածր է:

Որպես ֆինանսական միջնորդության մակարդակի բնութագրիչ՝ տոկոսադրույքների սպրեդի համեմատաբար բարձր մակարդակը վկայում է ՀՀ ֆինանսական համակարգում անբավարար ֆինանսական միջնորդության աստիճանի մասին: Տարվա ընթացքում տոկոսադրույքների սպրեդը տատանվել է 13 տոկոսային կետի միջակայքում (Մերձբալթյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների 4 - 6 տոկոսային կետ կազմող սպրեդի նկատմամբ ՀՀ բանկերի տոկոսադրույքների սպրեդը մնում է բավականին բարձր):

Սպրեդի բարձր մակարդակը հիմնականում վարկերի բարձր պահանջարկի պայմաններում դրանց սահմանափակ առաջարկի առկայության արդյունք է: Կարևորագույն խնդիր է նաև երկարաժամկետ վարկերի պահանջարկի բավարարումը: Համակարգում երկարաժամկետ խնայողությունների շարունակական բացակայության պայմաններում երկարաժամկետ վարկավորման դեպքում կարող է առաջանալ ներգրավման-տեղաբաշխման անհամապատասխանությունից բխող իրացվելիության և տոկոսադրույքների ռիսկերով պայմանավորված խնդիրներ: Այս առումով, Կենտրոնական բանկն ակտիվ քայլեր է ձեռնարկում ապահովագրության, արժեթղթերի շուկաների, ինչպես նաև կենսաթոշակային համակարգի զարգացումների նախադրյալների ստեղծման ուղղությամբ, քանզի տնտեսությունում «երկար փողերի» ձևավորման կարևորագույն նախադրյալ է նշված ինստիտուտների կայացումը: Միաժամանակ, Կենտրոնական բանկը շարունակում է իրականացնել հիփոթեքային վարկավորման զարգացմանն ուղղված մի շարք միջոցառումներ (հիմնականում Գերմանական զարգացման բանկի հետ համատեղ):

2006 թվականին բանկային համակարգի հատկանշական դրսևորումներից են եղել ակտիվների և պարտավորությունների արժութային կառուցվածքի էական փոփոխությունները.

- դրամային ակտիվների տեսակարար կշիռը աճել է 9.5 տոկոսային կետով և կազմել ընդհանուր ակտիվների 56.9%-ը (դրամային ակտիվներն աճել են 42.9%-ով, արտարժութային ակտիվները նվազել են 2.5%-ով),
- դրամային պարտավորությունների տեսակարար կշիռը աճել է 10.8 տոկոսային կետով և կազմել ընդհանուր պարտավորությունների 44.0%-ը (դրամային պարտավորություններն աճել են 54.8%-ով, արտարժութային պարտավորությունները նվազել են 2.0%-ով):

Բանկային համակարգի կողմից տնտեսության վարկավորման ծավալները տարվա ընթացքում ավելացել է 25%-ով և տարեվերջին կազմել 230 մլրդ դրամ: Տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում արձանագրվել է վարկային ներդրումների աճ, ընդ որում՝ պահպանվել են տնտեսության ճյուղերի վարկավորման՝ նախորդ տարի դրսևորված սեզոնայնությունները: 2006 թվականին ամենաբարձրը հիփոթեքային վարկավորման աճի տեմպն էր (114% աճ): Ինչպես և վերջին տարիներին, ամենամեծ ծավալային աճը ապահովել են սպառողական վարկերը, որին նպաստել է նաև 2006 թվականին բնակչության զուտ տնօրինվող եկամտի 19% աճը:

2006 թվականին անվանական ՀՆԱ աճին հիմնականում նպաստել են շինարարության ճյուղը և ծառայությունների ոլորտը: Չնայած շինարարության աճը հիմնականում ապահովվել է ոչ թե բանկային համակարգի վարկավորման, այլ մասնավոր հատվածի կողմից ֆինանսավորված շինարարության ծավալների աճի հաշվին, այնուամենայնիվ շինարարության ոլորտում թողարկման իրական աճը կազմել է 37%, որին զուգահեռ, բանկային համակարգի կողմից ճյուղի վարկավորումն ավելացել է 47%-ով:

Չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը տարեվերջին կազմել է ընդհանուրի ընդամենը 2.4%-ը, որի 66%-ը հսկվող դասի ակտիվներն են: Տարվա ընթացքում իրականացված զուտ մասհանումների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում կազմել է ընդամենը 0.4%՝ վկայելով ՀՀ բանկային համակարգում վարկային ռիսկի ցածր մակարդակի մասին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Ֆինանսական վերահսկողություն իրականացնող և վերահսկողական գործընթացին աջակցող ստորաբաժանումների խնդիրներն ու գործառույթները

2006 թվականին, երբ Կենտրոնական բանկը ստանձնեց Հայաստանի ֆինանսական հատվածի կարգավորումն ու վերահսկողությունը, փոփոխություններ տեղի ունեցան նաև ՀՀ ԿԲ կառուցվածքում: Կենտրոնական բանկն իր լիազորությունների սահմաններում ապահովում է ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության, վճարահաշվարկային համակարգի անխափան գործունեության անհրաժեշտ պայմաններ: Նշված խնդիրների ապահովման շրջանակներում, 2006 թվականից ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու և վերահսկողական գործընթացին աջակցող ստորաբաժանումներ են հանդիսանում Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության, ֆինանսական համակարգի քաղաքականության և վերլուծությունների, արժեթղթերի շուկայի, վիճակագրության, իրավաբանական, փոխանակման կետերի լիցենզավորման և վերահսկողության վարչությունները:

Ֆինանսական համակարգի քաղաքականության և վերլուծությունների ու Իրավաբանական վարչություններն աջակցում են ֆինանսական վերահսկողության գործընթացին՝ մեթոդաբանական, վերլուծական և իրավական առումներով: Վիճակագրության վարչությունը ԿԲ կողմից լիցենզավորված անձանցից հավաքագրում է տեղեկատվություն և ամփոփում:

Անմիջական վերահսկողություն իրականացնող վարչություններն են՝ Ֆինանսական վերահսկողության, Արժեթղթերի շուկայի, Փոխանակման կետերի լիցենզավորման և վերահսկողության:

Ֆինանսական վերահսկողության վարչության հիմնական խնդիրներն են.

- ՀՀ տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, գրավատների, Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող այլ անձանց լիցենզավորման, դրանց տարածքային ստորաբաժանումների գրանցման (հաշվառման) աշխատանքների կազմակերպում և իրականացում,
- ՀՀ տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, գրավատների և Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող այլ անձանց, իսկ օրենքով նախատես-

ված դեպքերում՝ նաև այլ անձանց գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացում,
- լուծարվող (ինքնալուծարվող) բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացում.
- իր իրավասության սահմաններում համագործակցություն Կենտրոնական բանկի այլ ստորաբաժանումների, ՀՀ պետական կառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև այլ երկրների կենտրոնական (ազգային) բանկերի, ֆինանսական վերահսկողության բնագավառում համապատասխան լիազորություններ ունեցող մարմինների և ֆինանսական վերահսկողության ոլորտում մասնագիտացված միջազգային կառույցների հետ:

Արժեթղթերի շուկայի վարչության հիմնական խնդիրներն են.
- ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն,
- արժեթղթերի շուկայում մասնագիտացված ծառայություններից օգտվող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն,
- արժեթղթերի շուկայի մասնակիցների գործունեության թափանցիկության ապահովում,
- համակարգում առկա ռիսկերի բացահայտման, գնահատման և կանխարգելման միջոցով՝ արժեթղթերի արժանահավատ գնագոյացման համակարգի, արժեթղթերով գործարքների վճարահաշվարկային համակարգի և արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի ամրագրման և հաշվառման (ռեեստրի վարման) համակարգի գործունեության ապահովում:

Փոխանակման կետերի լիցենզավորման և վերահսկողության վարչության հիմնական խնդիրներն են.
- ՀՀ տարածքում գործող՝ արտարժույթի առք ու վաճառք իրականացնող փոխանակման կետերի և արտարժույթի դիլերային առք ու վաճառք իրականացնող անձանց, ինչպես նաև դրանց տարածքային ստորաբաժանումների լիցենզավորման աշխատանքների կազմակերպում և իրականացում,
- ՀՀ տարածքում գործող՝ արտարժույթի առք ու վաճառք իրականացնող փոխանակման կետերի և արտարժույթի դիլերային առք ու վաճառք իրականացնող անձանց, ինչպես նաև դրանց տարածքային ստորաբաժանումների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացում,
- իր իրավասության սահմաններում համագործակցություն Կենտրոնական բանկի այլ ստորաբաժանումների, ՀՀ պետական կառավարման մարմինների և դրանց պաշտո-

նատար անձանց, ինչպես նաև այլ երկրների կենտրոնական (ազգային) բանկերի, արժութային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության համապատասխան լիազորություններ ունեցող մարմինների հետ:

Վերոնշյալ վարչությունները իրենց առջև դրված հիմնական խնդիրներից ելնելով՝ իրականացնում են իրենց իսկ կանոնադրությամբ ամրագրված գործառույթները:

Ֆինանսական վերահսկողության, Ֆինանսական համակարգի քաղաքականության և վերլուծությունների և Իրավաբանական վարչությունների ղեկավարները ԿԲ լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի անդամներ են, որը հանդիսանում է ԿԲ նախագահի կամ խորհրդի խորհրդակցական մարմին և ունի իր իրավասությունների սահմաններում որոշում ընդունելու իրավունք:

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը

ՀՀ կենտրոնական բանկի Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը նախագահում է Կենտրոնական բանկի նախագահը: Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ: Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը քննարկում է.

- ✓ բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ստեղծմանը նախնական հավանություն տալու, բանկերը և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը գրանցելու և լիցենզավորելու,
- ✓ բանկերի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, ինչպես նաև օտարերկրյա բանկերի ներկայացուցչությունների գրանցման,
- ✓ մասնագիտացված անձանց, ինքնակարգավորվող կազմակերպությունների, դրանց կանոնների գրանցման,
- ✓ այլ անձանց լիցենզավորման,
- ✓ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Կանոնակարգ 1-ով» նախատեսված փոփոխությունների գրանցման,
- ✓ բանկի ղեկավարների (բացառությամբ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների), ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից լիցենզիա ստացող այլ անձանց որակավորման և մասնագիտական համապատասխանության հարցերը,
- ✓ արժեթղթերի շուկայում մասնագիտական գործունեություն իրականացնելու որակավորման,

- ✓ արժեթղթերի գրանցման հայտարարագրի գրանցման հարցերը,
- ✓ Կենտրոնական բանկի կողմից գրանցված կամ լիցենզիա ստացած անձանց, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձանց կողմից թույլ տրված խախտումները, առկայության դեպքում՝ նրանց բացատրությունները և առարկությունները, նրանց նկատմամբ պատժամիջոց կիրառելու կամ չկիրառելու նպատակահարմարությունը,
- ✓ Կենտրոնական բանկի այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններից բխող հարցեր:

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի անդամներն են՝ ՀՀ ԿԲ նախագահը (հանձնաժողովի նախագահն է), ՀՀ ԿԲ նախագահի տեղակալը (հանձնաժողովի նախագահի տեղակալն է), ՀՀ ԿԲ ֆինանսական վերահսկողության վարչության պետը, ՀՀ ԿԲ ֆինանսական համակարգի քաղաքականության և վերլուծությունների վարչության պետը, ՀՀ ԿԲ իրավաբանական վարչության պետը: Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը:

Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների կեսից ավելին և նախագահողը: Նիստի արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները: Նիստի արձանագրությունը պատրաստվում է նիստի օրվան հաջորդող չորս օրվա ընթացքում: Հանձնաժողովի եզրակացությունը տրվում է բաց քվեարկության արդյունքներով՝ նիստին ներկա գտնվող անդամների ձայների 2/3-ով:

Հանձնաժողովի նիստերին լիցենզավորման և գրանցման հարցերը քննարկելիս, խորհրդակցական ձայնի իրավունքով, հանձնաժողովի նախագահողի հրավերով կարող են մասնակցել նաև նիստում քննարկվող խախտումն արձանագրած համապատասխան բաժնի ղեկավարը և աշխատակիցը, ինչպես նաև Կենտրոնական բանկի շահագրգիռ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները: Առանձին դեպքերում հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել նաև Կենտրոնական բանկի այլ աշխատակիցներ կամ խախտում թույլ տված անձը, կամ նրա ներկայացուցիչը:

Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորումը

Կենտրոնական բանկի կողմից բանկերի, վարկային կազմակերպությունների, արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց և ապահովագրական (բրոքերային) ընկերությունների լիցենզավորումն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը,

բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի, «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի և տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ի, «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքի, «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքի» 17-րդ բաժնի, «Ապահովագրական գործունեություն իրականացնողի լիցենզավորման, մասնաճյուղերի գրանցման և ապահովագրական գործունեություն իրականացնողի կանոնադրական կապիտալում բաժնեմաս (բաժնետոմս) կամ փայամասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու կարգի» հիման վրա: Կենտրոնական բանկի կողմից այլ ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորումն իրականացվում է «Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման կարգի», «Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի, «Արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 12-ի, «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ի, «Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 17-ի, «Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 18-ի, «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 19-ի և «ՀՀ տարածքում արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման լիցենզավորումը, կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 11-ի հիման վրա:

Կենտրոնական բանկի խորհուրդը հավանություն է տալիս այնպիսի ֆինանսական կազմակերպությունների հիմնադիրների միջնորդագրին, որոնց.

- ✓ հիմնադիրները չունեն վատ համբավ և քրեորեն հետապնդելի չեն,
- ✓ կապիտալում կատարված ներդրումներն ունեն օրինական ծագում,

- ✓ տնտեսական ծրագիրը իրատեսական է և բավարարում է Կենտրոնական բանկի կողմից հաստատված ձևին,
- ✓ գործադիր մարմնի և ղեկավարների մասնագիտական պատրաստվածության մակարդակը բավարարում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջները,
- ✓ ներկայացված հիմնադիր փաստաթղթերը արժանահավատ են և չեն պարունակում կեղծ տվյալներ,
- ✓ և այլն:

Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված կազմակերպությունների նշանակվող կամ ընտրվող ղեկավարների թեկնածուների մասնագիտական համապատասխանության ստուգումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի կողմից: Որակավորման պահանջները յուրաքանչյուր տարի թարմացվում և արդիականացվում են:

Ֆինանսական կազմակերպությունների վերահսկողությունը

Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված ֆինանսական կազմակերպությունների փաստաթղթային (այսուհետ՝ հեռակա) վերահսկողությունը և վերստուգվող անձանց մոտ (այսուհետ՝ տեղերում) ստուգումներն իրականացվում են Ֆինանսական վերահսկողության, Արժեթղթերի շուկայի և Փոխանակման կետերի լիցենզավորման և վերահսկողության վարչությունների կողմից (առանձին դեպքերում՝ նաև ԿԲ այլ ստորաբաժանումների աջակցությամբ):

Հեռակա վերահսկողությունը իրականացվում է ֆինանսական կազմակերպություններից ստացված տեղեկատվության (հաշվետվությունների և այլ տեսքով) հիման վրա:

Բանկերի նկատմամբ հեռակա վերահսկողությունն իրականացվում է «Հեռակա վերահսկողության իրականացման» ձեռնարկի կանոններին համապատասխան, որով սահմանվում են հեռակա վերահսկողության իրականացման սկզբունքներն ու մեթոդները, կանոնակարգվում հեռակա վերահսկողության գործընթացները, դրանց հաջորդականությունն ու ժամկետները, ինչպես նաև հեռակա վերահսկողության մեջ ներգրավված անձանց շրջանակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները:

Հեռակա վերահսկողության իրականացման համար, օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև ըստ «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ի պահանջների, վերահսկվող մարմինները Կենտրոնական բանկի վիճակագրության վարչություն են ներկայացնում հաշվետվական ձևեր՝ սահմանված բովանդակությամբ և ներկայացման ժամկետներով, որոնք, համապատասխան ստուգումներից հետո, տրամադրվում են Ֆինանսական վերահսկողության և Ֆինանսական համակարգի քաղաքա-

կանության և վերլուծությունների վարչություններին: Նշված վարչությունները վերահսկողական և վերլուծական աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով օգտվում են նաև վարկային ռեգիստրից ստացված տեղեկատվությունից, նախորդ ժամանակաշրջաններում Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվություններից, նախորդ և ընթացիկ ժամանակաշրջաններում բանկից ստացված գրություններից, ծանուցումներից, հեռանկարային զարգացման ծրագրերից, հրապարակված ֆինանսական հաշվետվություններից և դրանց կցված աուդիտորական եզրակացություններից, վերստուգվող անձանց մոտ (բանկերում) ստուգումների արդյունքներից և այլ միջոցներով ստացված տեղեկատվությունից:

Բանկերից ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքում յուրաքանչյուրի համար կազմվում են ներքին ամփոփ հաշվետվություններ, որոնցում բացահայտվում են բանկի գործունեությունը բնութագրող ցուցանիշների էական փոփոխությունները, ներկայացվում են գործունեության հիմնական միտումներն ու դրանց փոփոխությունները, նշվում են բանկի առջև ծառացած հիմնախնդիրները, գործունեության ռիսկային բնագավառները: Հեռակա վերահսկողության ընթացքում բացահայտվում են ոչ միայն բանկի ֆինանսական ցուցանիշների շարժերը, մասնավորապես՝ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվային ակտերով ամրագրված սահմանաչափերից շեղումները, այլ նաև ուսումնասիրվում են դրանց պատճառները, գնահատվում են դրանց փոփոխությունները և մշակվում համապատասխան միջոցառումների պլան՝ բացահայտված ռիսկերը կառավարելու նպատակով: Հեռակա վերահսկողությունն ուղղված է նաև բանկի սպասվող ֆինանսական վիճակի, ռիսկերի գնահատմանն ու վերլուծությանը:

Հեռակա վերահսկողության ընթացքում վերլուծության են ենթարկվում բանկերի վարկային, արտարժութային, տոկոսադրույքի, գնային, իրացվելիության ռիսկերը, որի համար կիրառվում են վարկային ռիսկի միգրացիայի մատրիցայի, VAR, դյուրացիայի, GAP մեթոդաբանությունները և ստրես - թեստերը:

Բանկերից ստացված տեղեկատվության հիման վրա, ամսական կտրվածքով հաշվարկվում է բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականը՝ ՔԱՄԵԼՍ-ը: Ուսումնասիրելով ու վերլուծելով հաշվետվությունների հիման վրա հաշվարկված ՔԱՄԵԼՍ-ի գնահատականները, վերջինս ձևավորող ցուցանիշները, ցուցանիշների փոփոխության հիմնական պատճառներն ու միտումները՝ վերահսկողը ճշգրտում է ՔԱՄԵԼՍ-ի գնահատականները՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՄԵԼՍ) հաշվարկման, հաստատման և հրապարակման կարգի»: Նախորդ ժամանակաշրջանի համեմատ ՔԱՄԵԼՍ-ի գնահատականների կտրուկ շեղումների դեպքում վերա-

հսկողի կողմից կատարվում է մանրակրկիտ վերլուծություն՝ շեղումների պատճառները բացահայտելու համար[1]:

Վարկային կազմակերպությունների հեռակա վերահսկողության իրականացման համար հիմք են հանդիսանում ըստ «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ի պահանջների՝ վարկային կազմակերպությունների կողմից ուղարկված հաշվետվությունները:

Գրավատների նկատմամբ հեռակա վերահսկողության իրականացման համար ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006թ. սեպտեմբերի 12-ի թիվ 534-Ն որոշմամբ ընդունվեց «Գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը և լրացման» կարգը, համաձայն որի՝ գրավատների կողմից ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացվում ամսական և եռամսյակային հաշվետվություններ: Գրավատների կողմից ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացվում նաև տարեկան ֆինանսական հաշվետվություններ:

Արտարժույթի փոխանակման կետերի նկատմամբ հեռակա վերահսկողության իրականացման համար հիմք են հանդիսանում փոխանակման կետերի կողմից ներկայացվող հաշվետվությունները, ինչպես նաև լիցենզավորման պայմանների ներքո ներկայացվող պայմանագրերը՝ համաձայն «Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի պահանջների: Փոխանակման կետերի կողմից ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացվում շաբաթական հաշվետվություններ իրենց կողմից իրականացված արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների ծավալների ու փոխարժեքների վերաբերյալ:

Ապահովագրական գործունեություն իրականացնող ընկերությունների (ապահովագրական ընկերություններ և ապահովագրական բրոքերային ընկերություններ) հեռակա վերահսկողությունն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 11.05.2006 թ. թիվ 1/329-Ա որոշմամբ՝ «Ապահովագրական գործունեություն իրականացնողների հեռակա վերահսկողության իրականացման ձեռնարկի» համաձայն: Ապահովագրական գործունեություն իրականացնող ընկերությունների (ապահովագրական ընկերություններ և ապահովագրական բրոքերային ընկերություններ) հեռակա վերահսկողության իրականացման համար հիմք են հանդիսանում իրենց կողմից ներկայացվող հաշվետվությունները՝ համաձայն «Ապահովա-

---

[1] ՔԱՄԵԼՍ-ի գնահատականը տատանվում է 1 - 5 միավորանոց սանդղակում, ընդ որում՝ գնահատականի՝ 3 միավորից պակաս արդյունքը ՀՀ կենտրոնական բանկի համար կարող է բանկի տարածքային ստորաբաժանումների բացման միջնորդագիրը մերժելու, առավել խիստ հիմնական տնտեսական նորմատիվներ կամ պատժամիջոցներ սահմանելու, ինչպես նաև որոշ գործարքների իրականացման սահմանափակման հիմք հանդիսանալ: Բանկի ամփոփ գնահատականի՝ 2 միավոր և ցածր լինելու դեպքում բանկը համարվում է անվճարունակ:

գրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 28.03.2006 թվականի 124-Ն որոշման 1.8 կետով սահմանված «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունները, դրանց լրացման և ներկայացման կարգն ու ժամկետները» հավելվածի:

Արժեթղթերի շուկայի մասնակիցների (շուկայի մասնագիտացված անձինք, «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» և «Հայաստանի ֆոնդային բորսա» ինքնակարգավորվող կազմակերպությունները) հեռակա և տեղերում վերահսկողությունը իրականացվում է «Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց, ինքնակարգավորվող կազմակերպությունների և թողարկողների ստուգումների և հեռակա վերահսկողության ընթացակարգերի» ուղեցույցների վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 27.04.2006 թ. 1/298-Ա որոշման համաձայն: Հեռակա ստուգումների համար հիմք են ընդունվում արժեթղթերի շուկայի մասնակիցների կողմից ներկայացված հաշվետվությունները, ընդ որում՝ արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց և ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների ձևերը և դրանց ներկայացման ժամկետները սահմանված են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 05.12.2006 թ. թիվ 713-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքով»: Արժեթղթերի շուկայի մասնակիցները ներկայացնում են ընթացիկ և ֆինանսական հաշվետվություններ:

Ընդհանուր առմամբ, հեռակա վերահսկողության ժամանակ իրականացվում է ֆինանսական կազմակերպությունների գործունեության շարունակական վերլուծություն՝ ֆինանսական վիճակի, ռիսկերի մակարդակի գնահատման ու կազմակերպությունների գործունեությունը կանոնակարգող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանության ստուգման նպատակներով: Հեռակա վերահսկողության հիմնական խնդիրը կազմակերպության ֆինանսական վիճակի շաբաթական, ամսական, եռամսյակային և տարեկան վերլուծությունների միջոցով ռիսկերի բացահայտումն ու գնահատումն է՝ դրանց հնարավոր կորուստները կանխելու կամ նվազեցնելու նպատակով:

Հեռակա վերահսկողության ընթացքում հայտնաբերված ռիսկերի առավել համապարփակ ուսումնասիրության, առաջացած ռիսկերի պատճառների բացահայտման նպատակով, ինչպես նաև Կենտրոնական բանկի նախագահի կարգադրությամբ հաստատված՝ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ստուգումների ժամանակացույցի հիման վրա, կազմակերպություններում իրականացվում են տեղերում վերստուգումներ:

Կենտրոնական բանկը ՀՀ տարածքում գործող բանկերում և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում տեղերում վերստուգումներ է իրականացնում՝ համաձայն «Բանկերում

վերստուգումների իրականացման ձեռնարկի»: Բանկի տարբեր ոլորտների վերահսկողությունն իրականացնելիս վերահսկողները գնահատում են բանկի ներքին հսկողության համակարգի, իրականացվող գործընթացների և այդ ոլորտների գործունեությունը կարգավորող ներքին քաղաքականությունների, ընթացակարգերի և կարգերի կիրառելիությունը: Գնահատում են բանկի ներքին հսկողության համակարգը, ներքին աուդիտի գործունեության արդյունավետությունը և պարզում՝ բանկի աշխատակիցները գործո՞ւմ են արդյոք բանկի ղեկավարության կողմից սահմանված սկզբունքներին համապատասխան: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում բանկի կառավարման համակարգի վերլուծությանը և դրա հետ կապված ռիսկերի բացահայտմանը, մասնավորապես՝ բանկի խորհրդի և գործադիր ղեկավարության միջև իրավունքների և պատասխանատվության սահմանազատմանը:

Գրավատներում վերստուգումներն իրականացվում են համաձայն ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 07.04.2006թ. թիվ 1/237-Ա որոշմամբ ընդունված «ՀՀ տարածքում գործող գրավատներում ստուգումների իրականացման ձեռնարկի»:

Փոխանակման կետերի նկատմամբ տեղերում ստուգումներն իրականացվում են համաձայն ՀՀ կենտրոնական բանկի նախագահի կողմից հաստատված «ԿԲ-ում արտարժույթի փոխանակման կետերի լիցենզավորման, ստուգումների կազմակերպման և անցկացման, խախտումների արձանագրման և պատասխանատվության միջոցների կիրառման հետ կապված միջոցառումների իրականացման ձեռնարկի»:

Ապահովագրական գործունեություն իրականացնող կազմակերպությունների նկատմամբ տեղերում ստուգումներն իրականացվում են համաձայն ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 30.03.2006 թ. 1/206-Ա որոշմամբ ընդունված «ՀՀ տարածքում ապահովագրական գործունեություն իրականացնողների մոտ (տեղերում) ստուգումների իրականացման ձեռնարկի»:

Արժեթղթերի շուկայի մասնակիցների տեղերում վերահսկողությունը իրականացվում է համաձայն ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 27.04.2006 թ. 1/298-Ա որոշմամբ հաստատված «Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց, ինքնակարգավորվող կազմակերպությունների և թողարկողների ստուգումների և հեռակա վերահսկողության ընթացակարգերի ուղեցույցների»:

Ստուգումների ծրագիրը հաստատում է Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը: Յուրաքանչյուր ստուգման ավարտից հետո վերստուգող խմբի կողմից պատրաստվում է ստուգման հաշվետվություն և ներկայացվում է Կենտրոնական բանկի խորհրդին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2006 թվականի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի գործունեության կարգավորման դաշտի բարեփոխման աշխատանքները:

2006 թվականին ՀՀ Ազգային ժողովը ընդունել է ՀՀ կենտրոնական բանկի նախաձեռնած օրենքների նախագծերի հետևյալ փաթեթները.

- ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-76, ««Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-77, ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-78 և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-79 ՀՀ օրենքներ: Նշված օրենքները նպատակ ունեն ոչ փաստաթղթային ձևով թողարկվող պետական արժեթղթերի պահառության և շրջանառության բնագավառում առաջացած խնդիրների հետ կապված՝ ՀՀ գործող օրենքներում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

- ««Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-69, ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-703 ՀՀ օրենքներ: Լրացումներն ու փոփոխությունները առաջնահերթ բխում են նշված օրենքների հակասությունները վերացնելու անհրաժեշտությունից:

- ««Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-73, ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-74, ««Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-75 ՀՀ օրենքներ: Նշված օրենքների ընդունումը պայմանավորված է «Ճանապարհային վճարի մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» և «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքները «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքին, մասնավորապես՝ դրա 6-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների

մատուցման և աշխատանքների կատարման, գույքի օգտագործման փողային գնանշումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

- «Ինկասացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-101 ՀՀ օրենք. Օրենքի ընդունումը առաջին հերթին պայմանավորված է մի շարք սուբյեկտների կողմից կանխիկ դրամի փոխադրումից ծագող հարաբերությունների կարգավորմամբ:

- ««Ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը: Այդ օրենքով ուժը կորցրած է ճանաչվել «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված 6-րդ մասը, ըստ որի՝ իրենց կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողների 49 տոկոսից ավելի մասնաբաժին ունեցող ապահովագրական կազմակերպությունները չէին կարող Հայաստանի Հանրապետությունում իրականացնել կյանքի ապահովագրություն, պարտադիր ապահովագրություն, պարտադիր պետական ապահովագրություն, ինչպես նաև պետական և տեղական կազմակերպությունների գույքային շահերի ապահովագրություն:

- ««Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը և դրա ընդունմամբ պայմանավորված այլ օրենքներ: Նշված օրենքը սահմանում է «գնանշում», արտարժույթի դիլերային-բրոքերային, արտարժույթի առուվաճառքի գործունեություն, արտարժույթի սակարկություններ իրականացնող անձ հասկացությունները, ինչպես նաև նպատակ ունի վերացնելու օրենքի գործողության ընթացքում ի հայտ եկած թերությունները:

- ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքները: ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի փոփոխությունները նպատակաուղղված են օրենքի համապատասխանեցմանը ՀՀ սահմանադրությանը (փոփոխություններով) և գնաճի կառավարման նոր մոտեցման՝ գնաճի նպատակադրման ռազմավարության սահմանմանը: Նշված խնդրից ելնելով՝ ՀՀ Ազգային ժողովը փոփոխություն կատարեց նաև «Բյուջետային համակարգի մասին» և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքներում:

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքն ուղղված է հետևյալ խնդիրների լուծմանը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 235-րդ հոդվածի համաձայն՝ «Գրավի իրավունքը ծագում է գրավի պայմանագիրը կնքելու պահից, իսկ այն դեպքերում, երբ գրավի իրավունքը ենթակա է պետական գրանցման, ապա այն գրանցելու պահից:»: Ոչ փաստաթղթային ձևով թողարկվող արժեթղթերով կնքվող գործարքների արդյունքում իրավունքները գործնականում կարող են ծագել միայն պահառուի (ենթապահառուի) մոտ համապատասխան գրառում կատարելու պահից: Ընդ որում՝ այդպիսի գրառումը երբեք չի կարելի համարել պետական գրանցում, հետևաբար ոչ փաստաթղթային արժեթղթերի գրավի իրավունքի ծագման պահի հետ կապված՝ առկա է անհամապատասխանություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հետ:

Ներկայումս պետական արժեթղթերը թողարկվում են ոչ փաստաթղթային ձևով, և դրանց գրավի հետ կապված գործառնություններն իրականացվում են երկմակարդակ պահառուական համակարգի միջոցով: Այս պարագայում, զուտ տեխնիկապես հնարավոր չէ դրանց հաջորդող գրավը, ինչը հակասության մեջ է մտնում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 236-րդ հոդվածի հետ:

Անհրաժեշտ է հստակեցնել նաև այն հարցը, որ գրավադրված արժեթղթերի մարման դեպքում գրավադրված են համարվում դրանց մարման արդյունքում առաջացած դրամական միջոցները:

2. ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-76 ՀՀ օրենքն ուղղված է հետևյալ խնդրի լուծմանը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության համաձայն՝ «Ամրագրելու միջոցով հավաստված իրավունքների և իրավատերերի պաշտոնական ամրագրման, գրառումների փաստաթղթային հաստատման ու ոչ փաստաթղթային արժեթղթերով կատարվող գործառնությունների կարգը որոշվում է օրենքով կամ օրենքով սահմանված կարգով»: Սակայն ներկայումս գոյություն չունի այնպիսի օրենք, որը համահունչ լինի վերը նշված դրույթին և նախատեսի, թե ինչպես է որոշվելու ոչ փաստաթղթային արժեթղթերով կատարվող գործառնությունների կարգը: Ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ գործառնությունների կարգը ընդամենը սահմանելու է, թե արժեթղթերի դեպո հաշիվներից միջոցների շարժը նախաձեռնելու համար կողմերը ինչպես պետք է պահառուական համակարգին ներկայացնեն համապատասխան դեպո հանձնարարականները, ինչպես նաև դրանց ձևը և ներկայացման կարգը:

3. ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքն ուղղված է հետևյալ խնդրի լուծմանը.

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի թիվ 75-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացման մասին» կարգի 11-րդ գլուխը սահմանում է, որ պարտատոմսերի բռնագանձման գործառնությունները կատարվում են օրենքով սահմանված կարգով: Սակայն ներկայումս գոյություն չունի նման օրենք:

Քանի որ պարտատոմսերի բռնագանձման կարգով սահմանվելու են այնպիսի պահանջներ, որոնցով պետք է առաջնորդվի ոչ միայն Կենտրոնական բանկը, առևտրային բանկը, այլ նաև դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, ապա դրա սահմանումը միայն Կենտրոնական բանկի խորհրդի կողմից՝ վիճարկելի է, քանի որ ԿԲ-ն չի կարող սահմանել այլ պետական մարմինների կողմից կատարման ենթակա նորմեր:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը՝ առաջարկվող նախագիծը սահմանում է, որ Պարտապանին պատկանող՝ ոչ փաստաթղթային ձևով թողարկված Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերի վրա արգելանք դնելու, դրանք առգրավելու և հարկադիր իրացնելու համար հարկադիր կատարողի կողմից պահառուին (ենթապահառուին) տրվող դեպո-հաճախարարականների ձևը, դրանց ներկայացման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ:

4. ««Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքն ուղղված է հետևյալ խնդրի լուծմանը.

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի թիվ 75-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացման մասին» կարգը, գրավադրված պարտատոմսերի մարման արդյունքում գոյացած դրամական միջոցների առնչությամբ սահմանում է, որ հինգ բանկային օրվա ընթացքում գրավատուի ենթապահառուն պարտավոր է բանկ ներկայացնել գրավի առարկա հանդիսացող պարտատոմսերի մարումից առաջացած դրամական միջոցները երրորդ անձ հանդիսացող առևտրային բանկում հաշվառելու վերաբերյալ համաձայնագիր: Ընդ որում, եթե հինգ բանկային օրվա ընթացքում գրավատուի ենթապահառուի կողմից չի ներկայացվում նշված համաձայնագիրը, ապա Կենտրոնական բանկն իրավասու է գրավադրված գումարները փոխանցելու նոտարի դեպոզիտ: Այս պահանջը և

դրա իրականացման կարգը առավել նպատակահարմար է սահմանել «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով, ինչն էլ նախատեսված է ներկայացված նախագծով:

5. ««Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը նախ պայմանավորված է տվյալ օրենքի և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի հակասությունները վերացնելու անհրաժեշտությամբ:

Օրենքի անհրաժեշտությունը պայմանավորված է նաև նրանով, որ.

ա) Մինչև այժմ բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանվել է ԿԲ նախագահի անհատական ակտով, սակայն այն, «Իրավական ակտերի մասին» օրենքի համաձայն, պետք է սահմանվի նորմատիվ իրավական ակտով: Իսկ դրա՝ օրենքով նախատեսված ժամկետներից ավելի շուտ ուժի մեջ մտնելու հնարավորության սահմանումը կապված է այն հանգամանքի հետ, որ սահմանված դրույքները, տարբեր անձանց և մարմինների կողմից հաշվարկներ կատարելու նպատակով, կիրառվում են հենց դրանց ընդունման պահից: Հետևաբար անտրամաբանական կլինի այս պարագայում խոսել նորմատիվ ակտերի գրանցման, հրապարակման և ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետների և ընթացակարգերի պահպանման անհրաժեշտության մասին:

բ) Պարտադիր պահուստավորման նորմատիվը ոչ միայն զուտ բանկերի համար սահմանվող տնտեսական նորմատիվ է, այլ նաև ԿԲ կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության գործիք: Հետևաբար հաճախ անհրաժեշտություն է առաջանում, որ ԿԲ-ն անմիջապես միջամտի շուկայի գործառնություններին՝ սահմանելով պարտադիր պահուստավորման նոր չափ, որը պետք է ուժի մեջ մտնի սեղմ ժամկետներում:

գ) Հատուկ տնտեսական նորմատիվների՝ սեղմ ժամկետներում ուժի մեջ մտնելու հնարավորության սահմանումը պայմանավորված է բանկային համակարգում հավանական ճգնաժամային իրավիճակներից դուրս գալուն ուղղված միջոցների կիրառման հրատապությամբ:

դ) Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ նախագծով սահմանված թե՛ բանկային տոկոսի հաշվարկային դրույքը, թե՛ պարտադիր պահուստավորման նորմատիվը և թե՛ հատուկ տնտեսական նորմատիվները սահմանող Կենտրոնական բանկի իրավական ակտերը այնպիսի բնույթ չունեն, որ որևէ հակասություն առաջանա դրանց և ՀՀ սահմանադրության, ՀՀ օրենքների կամ այլ իրավական ակտերի միջև, քանի որ նախ՝ դրանք սահմանում են ընդամենը թվային մեծություններ, որոնց համար որևէ օրենքով կամ այլ իրավական ակտերով

սահմանափակումներ նախատեսված չեն: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ Կենտրոնական բանկի՝ վերը նշված ակտերի գրանցման պրակտիկան ցույց է տվել, որ մինչև այժմ դրանց՝ ՀՀ արդարադատության նախարարությունում իրավական փորձաքննության արդյունքներով՝ ՀՀ գործող օրենսդրության հետ որևէ հակասություն չի բացահայտվել (ինչը տրամաբանական է՝ հաշվի առնելով մասնավորապես վերը նշված նկատառումները): Իսկ տեսականորեն կարելի է ենթադրել միայն հենց «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հետ ոչ հայեցակարգային, այլ օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանման առնչությամբ հնարավոր հակասություններ, ինչը, կարծում ենք, այնքան էլ օրախնդիր չէ՝ հատկապես հաշվի առնելով խնդրի առարկա ակտերի հնարավոր ծավալը:

6. ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-703 ՀՀ օրենքի ընդունումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, պարտադիր պահուստավորման ենթակա միջոցների և պարտադիր պահուստավորման ենթակա միջոցների չափը գերազանցող մասի դիմաց սահմանելով տոկոսադրույք և վճարելով տոկոսներ, հանդես է գալիս որպես բանկ, և այս դեպքում, համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի, տվյալ որոշումները պետք է ընդունվեն ներքին իրավական ակտերի տեսքով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի կողմից:

7. «Ինկասացիայի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը սահմանում էր, որ այդ օրենքը տարածվում է միայն բանկերի և վարկային կազմակերպությունների մասնակցությամբ հարաբերությունների վրա: Օրենքում նշված ձևակերպումը չէր կարգավորում այլ կազմակերպությունների (օրինակ՝ փոխանակման կետ – ինկասացիոն կազմակերպություն) մասնակցությամբ հարաբերությունները, եթե բանկը կամ վարկային կազմակերպությունը չէր մասնակցում այդ հարաբերություններին, ինչը գործնականում լուրջ խնդիրներ էր առաջացնում: Միաժամանակ, անհրաժեշտություն էր առաջացել լրացուցիչ պահանջներ սահմանել ինկասացիոն կազմակերպությունների համար, ինչը ավելի ապահով կդարձնի նրանց գործունեությունը:

8. ««Ապահովագրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով ուժը կորցրած է ճանաչվել նշված օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասը, ըստ որի՝ իրենց կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողների 49 տոկոսից ավելի մասնաբաժին ունեցող ապահովագրական կազմակերպությունները չէին կարող Հայաստանի Հանրապետությունում իրականացնել կյանքի ապահովագրություն, պարտադիր ապահովագրություն,

պարտադիր պետական ապահովագրություն, ինչպես նաև պետական և տեղական կազմակերպությունների գույքային շահերի ապահովագրություն:

Փաստորեն, այս դրույթը սահմանափակում էր օտարերկրյա կապիտալի մուտքը ապահովագրության նշված բնագավառները, ինչը չի բխում հանրապետության՝ ազատ շուկայական տնտեսություն ունենալու ռազմավարությունից:

Միևնույն ժամանակ, այս դրույթը համահունչ չէր տնտեսական համագործակցության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից կնքված մի շարք միջազգային պայմանագրերի, մասնավորապես՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելու համաձայնագրի պայմաններին:

9. ««Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը նպատակ ունի վերացնելու օրենքի գործողության ընթացքում ի հայտ եկած թերությունները:

Օրենքի համաձայն՝ գնանշում է համարվում ցանկացած ապրանքի (գույքի), ծառայության, գույքի օգտագործման, աշխատանքի կատարման կամ աշխատավարձի և (կամ) դրան հավասարեցված վճարումների գնի, արժեքի կամ վարձատրության չափի հայտարարումը, ամրագրումը, սահմանումը կամ որևէ ձևով այլ անձանց հայտնելը:

Օրենքը սահմանում է, որ ՀՀ տարածքում սպառողական վարկերն ու փոխառությունները կարող են տրամադրվել միայն ՀՀ դրամով, ինչը նպատակ ունի նվազեցնելու հասարակության շրջանում դոլարայնացման մակարդակը:

Օրենքում լրացվեց արտարժույթի դիլերային-բրոքերային, արտարժույթի առուվաճառքի գործունեություն, արտարժույթի սակարկություններ իրականացնող անձանց գործունեությունը կարգավորող նոր հոդված: Համաձայն այդ հոդվածի՝ արտարժույթի դիլերային-բրոքերային և արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնողները պետք է լինեն իրավաբանական անձինք:

Ըստ օրենքի նախատեսվում է, որ խանութում արտարժույթի առուվաճառքի լիցենզիա կարող է ստանալ միայն տվյալ խանութում առուվաճառք իրականացնող իրավաբանական անձը, առևտրի կենտրոնում՝ միայն առևտրի իրականացման կազմակերպիչը, իսկ հյուրանոցում՝ հյուրանոցային ծառայություններ մատուցող իրավաբանական անձը: Նշված նորմի նախատեսումը նպատակ ունի բարձրացնելու փոխանակման կետերի կողմից արժութային օրենսդրության նորմերի պահպանման պատասխանատվությունը և զերծ մնալ իրավախախտումներից: Օրինակ, եթե արտարժույթի առուվաճառք է իրականացնում խանութում առուվաճառք չիրականացնող իրավաբանական անձը, ապա նրա համար կարևոր չէ տվյալ

խանութում փոխանակման կետի առկայությունը: Նա շահագրգռված է միայն իր բիզնեսով: Իսկ խանութում առուվաճառք իրականացնող իրավաբանական անձի համար կարևոր է նաև տվյալ խանութում փոխանակման կետի առկայությունը, քանի որ այն օժանդակում է խանութում առևտրային գործունեությանը և նպաստում դրան:

Օրենքում սահմանվում է, որ արժութային գործակալներ են նաև վարկային կազմակերպություններն ու դրամական (փողային) փոխանցումներ կատարող կազմակերպությունները, որոնք հսկողություն են իրականացնում արժութային օրենսդրության նորմերի պահպանման նկատմամբ:

10. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների նկատմամբ պաշտոնատար անձանց կողմից վերահսկողություն իրականացնելիս (հսկիչ գնումների ձևով) պատասխանատվություն չնախատեսելու հետ կապված հարաբերությունների կարգավորմամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները խախտելու համար ավելի խիստ պատասխանատվության միջոցներ սահմանելու անհրաժեշտությամբ:

11. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը պայմանավորված էր առանց համապատասխան լիցենզիայի փոխանակման կետի գործունեությամբ զբաղվելու իրավախախտումների դեմ արդյունավետ պայքար մղելու անհրաժեշտությամբ:

12. 2006 թվականի դեկտեմբերի 25-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը: Օրենքի փոփոխությունները կարելի է բաժանել 2 մասի՝

- Օրենքի համապատասխանեցումը ՀՀ սահմանադրությանը (փոփոխություններով).
- ՀՀ կենտրոնական բանկի որդեգրած՝ գնաճի կառավարման նոր մոտեցման՝ գնաճի նպատակադրման ռազմավարության սահմանում:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը ՀՀ-ում գների կայունության ապահովումն է, և Կենտրոնական բանկի կողմից իրականացվող

միջոցառումներն ուղղվում են այդ խնդրի իրագործմանը: Օրենքի 4-րդ հոդվածում օրենսդիրը հստակ նշում է նաև, որ եթե այլ դրույթներ հակասում են հիմնական խնդրի իրականացմանը, ապա նախապատվությունը պետք է տրվի գների կայունության ապահովմանը: Դրա հետևանքով «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում ամրագրված որոշակի դրույթների (օրինակ՝ Օրենքի 6-րդ հոդվածը կամ ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության իրականացմանը վերաբերող այլ դրույթներ) կիրառումը ներկա տնտեսական պայմաններում հակասության մեջ է մտնում 4-րդ հոդվածով ամրագրված խնդրի հետ: Այդ պատճառով անհրաժեշտություն է առաջանում հստակություն մտցնել նման դրույթներում և օրենսդրորեն ապահովել ԿԲ կողմից իր հիմնական խնդրի իրականացման լիարժեք հիմքեր:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունումը նույնպես Օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված իր հիմնական խնդրի իրականացման նպատակ է հետապնդում:

Օրենքի 4-րդ հոդվածի հստակեցումից բխող՝ գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո իրականացվող դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը ճկունության և կանխատեսելիության առավել բարձր մակարդակ է պահանջում, որի ապահովման համար առանցքային ուղենիշը գնաճի կանխատեսումներն են երկարաժամկետ հատվածի համար: Նշված խնդրից ելնելով՝ ՀՀ Ազգային ժողովը փոփոխություն կատարեց նաև «Բյուջետային համակարգի մասին» և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքներում:

2006 թվականին մի շարք փոփոխություններ են կատարվել նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատվող իրավական ակտերում:

Բանկային համակարգի կարգավորման դաշտում.

- «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններին համահունչ փոփոխություններ են իրականացվել մի շարք ենթաօրենսդրական ակտերում: Մասնավորապես՝ «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ում, «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար պաշտոն զբաղեցնելու ուղեցույցում», ինչպես նաև «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններ» կարգում: Նշված փոփոխություններն ուղղված են բանկում նշանակալից մասնակցության ձեռքբերմանը, բանկի խորհրդի անդամների գրանցման գործընթացների լրացուցիչ կարգավորմանը, բանկում արդյունավետ և անկախ ներքին հսկողության ապահովմանն ու կատարելագործմանը:

• ՀՀ տարածքում գործող բանկերում կորպորատիվ կառավարման ստանդարտների արդյունավետ ներդրման և բանկերի թափանցիկության ապահովման նպատակով հաստատվել է «Բանկերի կողմից իրենց վերաբերյալ տեղեկությունների հրապարակման (տրամադրման) կարգը»: Վերջինս սահմանում է բանկերի կողմից իրենց տնային էջում (ինտերնետային կայքում), ինչպես նաև լրատվական այլ միջոցներով իրենց վերաբերյալ պարտադիր հրապարակման (տրամադրման) ենթակա տեղեկությունները, այդ թվում՝ բանկի կառավարման կառուցվածքի, մասնակիցների, ղեկավարների, մատուցվող ծառայությունների և այլնի վերաբերյալ:

• ՀՀ բանկերի ներդրումային գործիքների բազմազանեցման (դիվերսիֆիկացման) և նոր գործիքների մեջ ներդրումների խրախուսման նպատակով փոփոխություններ են կատարվել «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում:

• Փոփոխություններ են կատարվել «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում: Այդ թվում՝ հանվել են ձև թիվ 12 «Բանկի դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ» և ձև թիվ 23 «Բանկի սեփականությունը հանդիսացող և վերջինիս գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվների, ոչ նյութական ակտիվների, ինչպես նաև այլ անձանց կանոնադրական կապիտալներում իրականացված ներդրումների գումարների վերաբերյալ» հաշվետվությունները:

• Ամբողջությամբ վերանայվել է «Բանկերում վերստուգումների իրականացման ձեռնարկը»՝ հաշվի առնելով դրա օգտագործման պրակտիկայում առաջացած խնդիրները: Ձեռնարկում ներառվել են նաև նոր՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրականացում», «Կորպորատիվ կառավարման որակի գնահատում» և «Ռիսկերի կառավարման համակարգի գնահատում» բաժինները:

Ապահովագրական շուկայի կարգավորման դաշտում ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ հաստատվել են՝

• «Վերաապահովագրության պահանջները սահմանող կարգը»՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 10.05.2006 թ. թիվ 190-Ն որոշմամբ: Վերոնշյալ փոփոխությամբ ՀՀ տարածքում գործող ապահովագրական ընկերություններին հնարավորություն է տրվում նվազեցնելու ձևավորված ապահովագրական պահուստները՝ վերոհիշյալ կարգի համաձայն հուսալի ճանաչված վերաապահովագրողների մասնակցության չափով:

• «Ապահովագրական պայմանագրերով ստանձնած ապահովագրական ռիսկերի փոխանցման կարգը», որը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հուլիսի 18-ի թիվ 454-Ն որոշմամբ: Վերոնշյալ կարգի հիմնական նպատակը ապահովագրության պայմանագրերով ստանձնած ապահովագրական ռիսկերի փոխանցման գործընթացի կանոնակարգումն է:

• «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» և «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը»՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 544-Ն որոշմամբ, որի նպատակը ՀՀ ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման համապատասխանեցումն է հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին:

• «Ապահովագրական գործունեություն իրականացնողի լիցենզավորման, մասնաճյուղերի գրանցման և ապահովագրական գործունեություն իրականացնողի կանոնադրական կապիտալում բաժնեմաս (բաժնետոմս) կամ փայամասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը», «Ապահովագրական գործունեություն իրականացնողների ղեկավարների, ակտուարի և գործակալի մասնագիտական որակավորման պահանջներն ու որակավորման ստուգման կարգը», «Ապահովագրողի գործունեության երեք տարվա գործարար ծրագրի ներկայացման կարգը»՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 1-ի թիվ 476-Ն որոշմամբ: Վերոնշյալ իրավական ակտով կարգավորվում են ապահովագրական գործունեություն իրականացնողների լիցենզավորման, ինչպես նաև ապահովագրական գործունեություն իրականացնողների մասնագիտական որակավորման ստուգման գործընթացները:

• «Ապահովագրական գործունեություն իրականացնողների ղեկավարների, ինչպես նաև գործակալի թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը»՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 1-ի թիվ 477- Ն որոշմամբ:

• «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունները, դրանց լրացման, ներկայացման կարգն ու ժամկետները» կանոնակարգ 32-ը՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 716-Ն որոշմամբ, որի նպատակը ապահովագրական ընկերությունների կողմից որոշակի պարբերականությամբ ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող տեղեկատվության հիման վրա ապահովագրական գործունեությանը առնչվող ռիսկերի բացահայտումն է, ապահովագրական շուկայի վերլուծությունը, ինչպես նաև

ապահովագրական գործունեություն իրականացնողների գործունեության վերաբերյալ վերահսկողական և վերլուծական նպատակներով տեղեկատվության հավաքագրումը:

- «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» կանոնակարգ 30-ը՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 663-Ն որոշմամբ, որի նպատակը ֆինանսապես կայուն ապահովագրական ընկերություններ ունենալու համար նորմատիվային դաշտը միջազգային լավագույն փորձին համահունչ դարձնելն է:

- «Ապահովագրական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» կանոնակարգ 31-ը՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 664-Ն որոշմամբ, որի նպատակը ապահովագրական ընկերությունների կողմից ձևավորվող պահուստները IAIS ստանդարտներին համապատասխանեցնելն է և դրանց հստակ հաշվարկման մեխանիզմների հիման վրա ապահովագրական ընկերությունների հուսալիությունը բարձրացնելը:

Արժեթղթերի շուկայի կարգավորման և վերահսկողության ոլորտների կատարելագործման և արդյունավետության բարձրացման նպատակով փոփոխություններ և լրացումներ են կատարվել Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքում, մասնավորապես.

- իրավական հիմքեր են ստեղծվել Կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ ստացած ձեռնարկությունների պարտատոմսերով բանկերի միջև ռեպո գործարքների կնքման համար՝ ապահովելով այդ գործընթացի փաստաթղթաշրջանառության ամբողջովին էլեկտրոնայնացումը.

- սկսվել են կորպորատիվ արժեթղթերով (այդ թվում՝ օտարերկրյա արժեթղթերով) պահառության գործունեությունը կարգավորող կանոնների մշակման աշխատանքները, որով հիմքեր են ստեղծվել երկմակարդակ պահառության համակարգի ձևավորման համար.

- սկսվել են բանկերին և վարկային կազմակերպություններին արժեթղթերի շուկա ուղղակիորեն մուտքի հնարավորության ընձեռման աշխատանքները.

- վերանայվել են մասնագիտացված անձանց կողմից հաշվետվությունների ներկայացման կարգը և ներկայացվող ձևերը: Մասնավորապես, բացառվել են մի շարք տեղեկությունների կրկնակի ներկայացման պահանջները, ինչպես նաև ներդրվել է արժեթղթերի և հաճախորդների ռեզիդենտության սկզբունքի հիման վրա տեղեկությունների ներկայացման սկզբունքը.

• վերանայվել են հաշվետու թողարկողների նկատմամբ սահմանված պահանջները, թողարկողների կողմից արժեթղթի գրանցման հայտարարագրի և հաշվետվությունների ներկայացման կարգը: Մասնավորապես, հաշվետու թողարկող որակելու նպատակով զուտ ակտիվների մեծությունը սահմանվել է 500 մլն դրամ, ներդրվել է հայտարարագրերի և հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման մեխանիզմը և նվազեցվել է ներկայացվող թղթային օրինակների քանակը:

Ֆինանսական համակարգի այլ մասնակիցների գործունեության կարգավորման դաշտում.

• Փոփոխություններ են կատարվել «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում: Մասնավորապես՝ թույլատրվել է ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպություններին իրենց անունից թողարկել և իրավաբանական անձանց միջև տեղաբաշխել պարտատոմսեր:

• 2006 թվականի հունվարի 1-ից Կենտրոնական բանկին է անցել գրավատների լիցենզավորման և վերահսկողության իրավասությունը: Այս կապակցությամբ Կենտրոնական բանկի կողմից մշակվել է «ՀՀ տարածքում գործող գրավատների ստուգումների իրականացման ձեռնարկը»:

• ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հունիսի 6-ի թիվ 238-Ն որոշման համաձայն՝ նոր խմբագրությամբ հաստատվել է «Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ը:

• Հաշվի առնելով ՀՀ տարածքում քարտային բնագավառում ձեռք բերված նվաճումները և զարգացման միտումները՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվել է «Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտերի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտերով գործառնությունների իրականացման կարգը», որով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային քարտերի թողարկման, սպասարկման և տարածման, ինչպես նաև վճարային քարտերով գործառնությունների իրականացման կանոնները:

• ՀՀ կենտրոնական բանկի կողմից միասնական վերահսկողության իրականացման հետ կապված՝ համապատասխան փոփոխություններ են կատարվել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգի մասնակիցների, վերջիննե-

րիս հաճախորդների հաշվեհամարների, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի մասնակիցների կոդավորման կարգում»՝ սահմանելով արժեթղթերի շուկայի մասնակիցներին, հաշվետու թողարկողներին, ապահովագրական գործունեություն իրականացնողներին և այլոց տրամադրվող կոդերի կարգը:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ 2006 ԹՎԱԿԱՆԻՆ

Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչությունը, արժեթղթերի շուկայի ու փոխանակման կետերի լիցենզավորման և վերահսկողության վարչությունները իրականացնում են փաստաթղթային և տեղերում ստուգումներ՝ նպատակ ունենալով բացահայտել և արագորեն կանխել ֆինանսական համակարգում առկա՝ անթույլատրելի մակարդակում դրսևորվող ռիսկերը, ինչպես նաև հարթել ֆինանսական համակարգի կայուն զարգացման ճանապարհին առաջացող հնարավոր նորանոր խոչընդոտները:

Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից 2006 թվականի ընթացքում իրականացվել են 58 «տեղերում ստուգումներ»՝ 8 բոլոր ուղղություններով և 5 նպատակային ստուգումներ բանկերում, 4 բոլոր ուղղություններով ստուգումներ վարկային կազմակերպություններում, 3 բոլոր ուղղություններով և 12 նպատակային ստուգումներ ապահովագրական ընկերություններում և 26 ստուգումներ գրավատներում:

Տեղերում վերստուգումների արդյունավետությունը և վերահսկողության աշխատակիցների ծանրաբեռնվածությունը

Ցուցանիշներ	2004 թվական	2005 թվական	2006 թվական
Ֆինանսական վերահսկողության վարչության աշխատակիցների թիվը	41	44	49
Բանկերի, վարկային կազմ., ապահովագրական ընկերությունների և գրավատների ընդհանուր ակտիվները (տարեկան միջին)	365.8 մլրդ դրամ	397.6 մլրդ դրամ	500.2 մլրդ դրամ
Ֆինանսական վերահսկողության վարչության մեկ աշխատակցի միջին ծանրաբեռնվածությունը	8.9 մլրդ դրամ	9.0 մլրդ դրամ	10.2 մլրդ դրամ
Տարվա ընթացքում իրականացված ստուգումների թիվը, այդ թվում՝	25	51	58
բանկերում՝ բոլոր ուղղություններով	5	5	8
բանկերում՝ նպատակային	17	41	5
վարկային կազմակերպություններում	3	5	4
ապահովագրական ընկերություններում	-	-	15
գրավատներում	-	-	26

Առևտրային բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից իրականացված խախտումները և ստուգումների ընթացքում արձանագրված թերությունները գլխավորապես վերաբերում են օրենսդրական, հաշվապահական հաշվառման կանոնների և նորմատիվային խախտումներին, տրամադրված տվյալների թերացումներին:

Ըստ վերահսկողության արդյունքների՝ 2006 թվականին արձանագրվել են առևտրային բանկերի կողմից թույլ տրված 667, վարկային կազմակերպությունների կողմից՝ 89, ապահովագրական ընկերությունների կողմից՝ 217 և գրավատների կողմից՝ 225 խախտումներ: Գերակշիռ մասի նկատմամբ որպես պատժամիջոց կիրառվել է նախազգուշացում:

Ֆինանսական կազմակերպությունների կողմից թույլ տրված խախտումները և կիրառված պատժամիջոցները 2006 թվականի ընթացքում

	Առևտրային բանկեր	Վարկային կազմակերպություններ	Ապահովագրական ընկերություններ	Գրավատներ
Խախտման տեսակ				
Հաշվապահական հաշվառման	61	19	-	3
Ակտիվների դասակարգման կարգի	47	2	1	-
Օրենսդրական	240	17	42	101
Նորմատիվային	52	-	1	-
Հանձնարարականի չկատարում	5	2	-	1
Հաշվետվությունների ուշացում	7	6	11	17
Անարժանահավատ տվյալներ	72	24	162	103
Ընդհանուր կապիտալի	5	1	-	-
Վարկային ռեգիստր	177	18		-
Պատժամիջոցներ				
Լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում	-	-	6	-
Տուգանք՝ կազմակերպությանը	266	24	52	119
Տուգանք՝ ղեկավարին	191	8	2	-
Տույժ	2	-	-	-
Նախազգուշացում	180	52	134	60
Ղեկավարին մասնագիտական որակավորման վկայականից զրկում	2	-	-	-
Չկիրառում	3	-	-	-
Կարճում	21	5	32	31

2006 թվականին ՀՀ կենտրոնական բանկի փոխանակման կետերի լիցենզավորման և վերահսկողության վարչության կողմից արտարժույթի փոխանակման կետերում իրականացվել են ընդհանուր 529 տեղերում ստուգումներ: Ստուգման արդյունքում ուժը կորցրած են ճանաչվել 126 փոխանակման կետերի լիցենզիաները: 134 դեպքում փոխանակման կետերը տուգանք են վճարել, 180 դեպքում՝ ստացել են նախազգուշացում:

2006 թվականի ընթացքում տեղերում ստուգումներ են իրականացվել արժեթղթերի շուկայի մասնակիցների շրջանում (3 մասնագիտական անձանց, 2 ինքնակառավարվող կազմակերպությունների և 2 հաշվետու թողարկողների մոտ): Բոլորի նկատմամբ, որպես պատժամիջոց, կիրառվել է նախազգուշացում:

ԿԱԴՐԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՆԵՐԻ ՀԵՏ

2006 թվականին փոփոխություններ տեղի ունեցան ՀՀ կենտրոնական բանկի կառուցվածքում՝ պայմանավորված Հայաստանի ֆինանսական հատվածի՝ ԿԲ կողմից մինչև 2006 թվականը չլիցենզավորվող այլ մասնակիցների (արժեթղթերի շուկայի, ապահովագրության շուկայի և այլ մասնակիցներ) կարգավորումն ու վերահսկողությունը Կենտրոնական բանկի լիազորության ներքո անցնելու փաստով: 2006 թվականին նոր կադրեր (մասնագետներ) ներգրավելու մեծ անհրաժեշտություն առաջացավ: Միաժամանակ ընդլայնվեցին կադրերի մասնագիտացման ոլորտների շրջանակները: Այս առումով, ԿԲ կադրերի վերապատրաստման առաջնային խնդիրներից մեկը դարձավ արժեթղթերի և ապահովագրական շուկաների կարգավորման և վերահսկողության աշխատանքներով զբաղվող կադրերի մասնագիտական կատարելագործման գործընթացը:

Ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության գործընթացներում ներգրավված մասնակցող աշխատակիցները մասնագիտական որակավորման բարձրացման և միջազգային փորձին ծանոթանալու համար 2006 թվականին մասնակցել են վերահսկողության արդիական խնդիրներին վերաբերող մի շարք ներքին և արտաքին դասընթացների և կոնֆերանսների: Ուսուցանված և քննարկված հիմնական թեմաներն են՝ «Ապահովագրական ընկերությունների վերահսկողություն», «Վերաապահովագրություն», «Ապահովագրական հիմնարար սկզբունքներ», «Արժեթղթերի շուկայի զարգացում», «Փոխանակման կետերի լիցենզավորում և վերահսկողություն», «Վճարային համակարգերի հսկում և փողերի լվացման դեմ վերահսկողություն», «Բանկային տեսչական վերահսկողություն», «Միավորված վերահսկողություն», «Բանկային ռիսկերի գնահատում և վերահսկողություն», «Խորացված ռիսկի վերլուծություն», «Կապիտալի Բազելյան նոր համաձայնագիր (Բազել II)», «Ֆինանսական կայունություն» և այլն:

Կենտրոնական բանկի կադրերի վերապատրաստմանը ակտիվորեն օժանդակել են Արժույթի միջազգային հիմնադրամը, Անգլիայի բանկի՝ կենտրոնական բանկերի ուսուցողական կենտրոնը, Ֆրանսիայի բանկը, Գերմանիայի Բունդեսբանկը, Նիդեռլանդների, Շվեյցարիայի, Ղազախստանի, Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկերը, Միջազգային հաշվարկների բանկը, Լեհաստանի ազգային բանկը, Ֆինանսական կայունության ինստիտուտը և այլն: Կադրերի վերապատրաստման թեմաները հիմնականում ներառել են ապահովագրական, արժեթղթերի և բանկային շուկաների վերահսկողության արդիական խնդիրներ՝ ռիսկերի կառավարման ու գնահատման, վերահսկողական նոր մոտեցումների կիրառման, դրանց կարգավորման դաշտի բարեփոխումների և ֆինանսական կայունության վերաբերյալ:

2006 թվականի ընթացքում սեմինարներ են կազմակերպվել նաև Երևանում. մասնավորապես՝ հունիսի 26-27-ը ՀՀ կենտրոնական բանկի հովանու ներքո տեղի ունեցավ «ՀՀ պետական մարմիններում փողերի «լվացման» դեմ պայքարի հարցերի շուրջ իրազեկում» թեմայով աշխատանքային սեմինարը:

2006 թվականի հունիսի 17 - 18-ը Երևանում տեղի ունեցավ Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի հոլանդական խմբում ընդգրկված երկրների տարեկան հանդիպումը: Նոյեմբերի 1 - 4-ը ՀՀ կենտրոնական բանկի հովանու ներքո Երևանում տեղի ունեցավ Միջպետական բանկի խորհրդի հերթական 33-րդ նիստը, որին ներկա էին բոլոր անդամ պետությունների ներկայացուցիչները: 2006թ. ապրիլից Միջպետական բանկի խորհուրդը նախագահում է ՀՀ կենտրոնական բանկի նախագահը:

Գործնական կապերը ընդլայնելու և բանակցություններ վարելու նպատակով հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ կենտրոնական բանկ այցելեցին «MOODY'S INVESTOR SERVICES» և «FITCH RATINGS» վարկանշային գործակալությունների, ՌԴ ֆինանսական մոնիտորինգի դաշնային ծառայության, «OMX GROUP» ընկերության, «BLOOMBERG UK» ընկերության, Հոլանդական «ABN-AMRO BANK» և «ING BANK» բանկերի, Բուլղարիայի ազգային բանկի, Լեհաստանի ազգային բանկի փորձագետների պատվիրակությունները և Սևծովյան առևտրի և զարգացման բանկի պատվիրակությունը՝ նախագահ Հայրետտին Կապլանի գլխավորությամբ:

2006 թվականի ընթացքում, միջկառավարական հանձնաժողովների շրջանակներում նախատեսված համապատասխան կենտրոնական բանկերի միջև ստորագրվել են համաձայնագրեր և փոխըմբռնման հուշագրեր:

2006 թվականի ապրիլի 13-ին Կիպրոսի մայրաքաղաք Նիկոզիայում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Կիպրոսի կենտրոնական բանկի միջև ստորագրվեց բանկային վերահսկողության ոլորտում համագործակցության մասին Փոխըմբռնման հուշագիր:

Տարվա ընթացքում շարունակվել են «ՀՀ կենտրոնական բանկի և Չինաստանի ժողովրդական բանկի միջև բանկային ոլորտում համագործակցության մասին» և «ՀՀ կենտրոնական բանկի և Իրանի Իսլամական Հանրապետության կենտրոնական բանկի միջև բանկային վերահսկողության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրերի ստորագրման նախապատրաստական աշխատանքները:

Միջազգային ֆինանսական զարգացումներին համահունչ՝ ՀՀ ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի բարեփոխումների և վերահսկողության արդյունավետության բարձրացման համար Կենտրոնական բանկի համապատասխան աշխատակիցները մշտապես վերապատրաստվում և համագործակցում են այլ երկրների ֆինանսական համակարգի վերահսկող մարմինների հետ:

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 2006 ԹՎԱԿԱՆԻՆ

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը

2006 թվականի ընթացքում բանկային գործունեության լիցենզիա որևէ բանկ չի ստացել: 2006 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր՝ 299 մասնաճյուղերով: Մասնաճյուղերի քանակն ավելացել է 32-ով: Տարվա ընթացքում մեկ բանկի կանոնադրական հիմնադրամում խոշոր փայամասնակցություն է ձեռք բերել ֆրանսիական Կրեդիտ Ագրիկոլ բանկը և մեկ այլ բանկում՝ ուկրաինական Ուկրպրոմբանկը:

Այս տարի ֆինանսական միջնորդությունը բնութագրող ցուցանիշները գրեթե չեն փոփոխվել. տարեվերջին համակարգի ընդհանուր ակտիվները կազմել են ՀՆԱ 19.8%-ը՝ վարկերը՝ 8.6%-ը՝ նախորդ տարվա համապատասխանաբար 19.8%-ի և 8.3%-ի փոխարեն:

Կենտրոնացվածությունը ՀՀ բանկային համակարգում

2006 թվականին բանկային համակարգում արձանագրվել են կենտրոնացվածության մակարդակի, մասնավորապես՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորությունների գծով, նվազման որոշակի միտումներ: Բանկային համակարգի ամփոփ ցուցանիշների գծով Հերֆինդալ-Հիրշմանի[2] կենտրոնացվածության գործակիցը բավականին ցածր է, ինչը վկայում է համակարգի համեմատաբար թույլ կենտրոնացվածության մասին:

Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակից

Ցուցանիշներ	31.12.04	31.12.05	31.12.06
Ընդհանուր ակտիվներ	0.09	0.08	0.08
Ընդհանուր պարտավորություններ	0.10	0.09	0.09
Ընդհանուր կապիտալ	0.06	0.06	0.07
Տնտեսությանը տրամադրված վարկեր	0.09	0.08	0.08
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ	0.11	0.10	0.10
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորություններ (ներառյալ բանկային հաշիվներ)	0.18	0.17	0.15

[2] *Հերֆինդալ - Հիրշմանի գործակիցն ընդունում է 0-ից 1 միջակայքում արժեքներ և բնութագրում կենտրոնացվածությունը (0-ին մոտ արժեքները նշանակում են կենտրոնացվածության ցածր աստիճան):*

Վերջին տարիներին համեմատաբար ցածր է եղել կապիտալի և բարձր՝ ավանդների կենտրոնացվածության գործակիցը:

Խոշոր և մանր բանկերի միջև բևեռացվածությունը փոքր-ինչ նվազել է. տարեսկզբին խոշորագույն 10 բանկերին բաժին էր ընկնում համակարգի ակտիվների 81%-ը, իսկ տարեվերջին՝ 80%-ը: Խոշորագույն 4 բանկերի բևեռացվածությունը համակարգում ևս նվազել է. տարեվերջին դրանց բաժին է ընկել ակտիվների 46%-ը և պարտավորությունների 49%-ը (տարեսկզբին՝ համապատասխանաբար 47%-ը և 50%-ը): Չնայած հաշվետու տարում խոշորագույն 4 բանկերում ցպահանջ պարտավորությունների բևեռացվածությունը կտրուկ նվազել է, այնուամենայնիվ ցպահանջ ավանդների կենտրոնացվածությունը դեռևս ամենաբարձրն է: Մեծացել է միայն ընդհանուր կապիտալի բևեռացվածությունը՝ հիմնականում պայմանավորված ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկի կանոնադրական հիմնադրամի կտրուկ աճով:

Բանկային հատվածի կենտրոնացվածության մակարդակը (%)

Ցուցանիշներ	31.12.04	31.12.05	31.12.06
Ընդհանուր ակտիվներ			
ԿԳ 4 (խոշորագույն չորս բանկերի տեսակարար կշիռը համակարգում)	49	47	46
ԿԳ 10 (խոշորագույն տասը բանկերի տեսակարար կշիռը համակարգում)	81	81	80
Ընդհանուր պարտավորություններ			
ԿԳ 4	52	50	49
ԿԳ 10	84	85	84
Ընդհանուր կապիտալ			
ԿԳ 4	32	35	38
ԿԳ 10	65	64	67
Տնտեսությանը տրամադրված վարկեր			
ԿԳ 4	45	43	47
ԿԳ 10	85	85	83
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ			
ԿԳ 4	51	51	49
ԿԳ 10	80	88	87
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորություններ (ներառյալ բանկային հաշիվներ)			
ԿԳ 4	60	64	57
ԿԳ 10	86	86	85

Բանկային համակարգի կապիտալի աճի միտումները


2006 թվականի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 26.8%-ով (25.4 մլրդ դրամով) և կազմել 120.2 մլրդ դրամ:

Ընդհանուր կապիտալի աճին նպաստել են բանկային համակարգի կողմից ապահովված շահույթը և կանոնադրական հիմնադրամի աճը:

Տարվա ընթացքում կանոնադրական հիմնադրամն ավելացել է 19.8 մլրդ դրամով, գլխավոր պահուստը նվազել է 1.8 մլրդ դրամով: Կանոնադրական հիմնադրամի աճ է արձանագրվել 9 բանկերում, ընդ որում՝ ի հաշիվ և՛ ներքին, և՛ արտաքին աղբյուրների: Կանոնադրական հիմնադրամի աճի 13.0 մլրդ դրամը բաժին է ընկնում ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկին՝ հիմնականում ի հաշիվ ֆրանսիական Կրեդիտ Ագրիկոլ խմբի կողմից կատարված ներդրման:

Հաշվետու տարում համակարգն ապահովել է 16.9 մլրդ դրամի չափով զուտ շահույթ: Տարվա ընթացքում վեց բանկեր նախորդ ժամանակաշրջանի շահույթից բաշխել են շահաբաժիններ՝ ընդհանուր 7.9 մլրդ դրամի չափով (ընդ որում՝ բաշխված կապիտալի մեծ մասը (մոտ 5.0 մլրդ դրամ) ուղղվել է կանոնադրական կապիտալի համալրմանը):

Գծապատկեր 1. Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի կառուցվածքը




1. Փաստացի լրացված կանոնադրական հիմնադրամ, 2. Գլխավոր պահուստ
3. Չբաշխված շահույթ (ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների), 4. Այլ

Տարվա ընթացքում համակարգի ընդհանուր կապիտալը, ընդհանուր պարտավորությունների համեմատությամբ, դրսևորել է առաջանցիկ աճի տեմպ, ինչի արդյունքում ընդհանուր կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցությունը (լևերեջի գործակիցը) ավելացել է 2.3 տոկոսային կետով և 2006 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 29.7%:

Բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը

2006 թվականի ընթացքում բանկային համակարգի վարկային ներդրումների աճի տեմպը փոքր-ինչ զիջել է ընդհանուր կապիտալի աճի տեմպը, որը պայմանավորել է ընդհանուր և հիմնական նորմատիվային կապիտալների առաջանցիկ աճը ռիսկով կշռված ակտիվների աճի համեմատ: Նշվածի արդյունքում տարեվերջին բանկային համակարգի ընդհանուր և հիմնական կապիտալների համարժեքության ցուցանիշները գերազանցել են տարեսկզբի նույն ցուցանիշները. ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշն աճել է 1.2, իսկ հիմնական կապիտալի համարժեքության ցուցանիշը՝ 1.0 տոկոսային կետով և համապատասխանաբար կազմել 34.9% և 32.7%: ՀՀ տարածքում գործող բանկերի համարժեքության ցուցանիշները բավականաչափ գերազանցում են նորմատիվների՝ պահանջվող 12% և 8% մակարդակները:

Գծապատկեր 2. Ընդհանուր և հիմնական կապիտալի համարժեքությունը ըստ բանկերի



Առևտրային բանկերի սեփականատերերը

Ըստ կազմակերպաիրավական տեսակների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող 21 առևտրային բանկերից 2-ը սահմանափակ պատասխանատվությամբ, 2-ը՝ բաց բաժնետիրական, 17-ը՝ փակ բաժնետիրական ընկերություններ են: Հատկանշական է, որ 2006 թվականին մեկ բանկ փոխել է կազմակերպաիրավական տեսակը (կոոպերատիվ ընկերությունից դարձել է փակ բաժնետիրական ընկերություն), որի կապիտալում խոշոր փայամասնակցություն է ներդրել ֆրանսիական Կրեդիտ Ագրիկոլ խումբը:

Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի մասնակիցներ (բաժնետերեր, փայատերեր) են 1602 ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնցից 70-ը՝ ոչ ռեզիդենտներ: Եթե բացառենք 2 բաց բաժնետիրական ընկերության կարգավիճակ ունեցող բանկերը, ապա 19 բանկերի մասնակիցները 90 ֆիզիկական և իրավաբանական անձինք են, որոնցից 30-ը՝ ոչ ռեզիդենտներ: Չորս բանկերում բաժնեմասերի 100%-ը տնօրինում է մեկ անձ (երկու ռեզիդենտ իրավաբանական անձինք, մեկ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ և մեկ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ), իսկ ևս ութ բանկերում մեկ բաժնետեր տնօրինում է բաժնետոմսերի 50%-ից ավելի բաժնեմասը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Բանկային համակարգի ներգրաված միջոցների աճի միտումները

2006 թվականի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններն աճել են 16.9%-ով (58.4 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 404.3 մլրդ դրամ: Պարտավորությունների աճն ամբողջապես պայմանավորվել է դրամային պարտավորությունների աճով: Դրամով պարտավորություններն ավելացել են 54.8%-ով, իսկ արտարժույթով պարտավորությունները նվազել են 2.0%-ով, ինչի արդյունքում դրամով պարտավորությունների տեսակարար կշիռը 10.7 տոկոսային կետով աճելով՝ տարեվերջին կազմել է 44.0%: Չնայած արձանագրվել է դոլարայնացման մակարդակի նշանակալի նվազում, այնուամենայնիվ այն դեռևս բարձր մակարդակի վրա է:

Պարտավորությունների փաստացի աճը հիմնականում ապահովվել է ավանդների 38.3 մլրդ դրամ, բանկերի նկատմամբ պարտավորությունների 8.8 մլրդ դրամ և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների 6.2 մլրդ դրամ աճի հաշվին:

Նվազել են բանկերի լորո թղթակցային հաշիվները՝ 5.3%-ով (263 մլն դրամով): Տարեվերջին լորո հաշիվների 75%-ը բաժին է ընկել ոչ ռեզիդենտ բանկերին, ընդ որում՝ հիմնականում Ռուսաստանում և Իրանում գործող բանկերին:

Գծապատկեր 3. Բանկային համակարգի պարտավորությունների աճի միտումները




Տարվա ընթացքում բանկային համակարգի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրաված ընդհանուր միջոցներն ավելացել են 14.6%-ով (38.3 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 299.6 մլրդ դրամ:

Ինչպես 2005 թվականին, այս տարի ևս բանկային համակարգի առանցքային դրսևորումներից է եղել այն, որ ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրաված ընդհանուր ավանդների աճն ամբողջությամբ ապահովվել է դրամային ավանդների հաշվին. դրամային ավանդներն աճել են 55.4%-ով (46.6 մլրդ դրամով), իսկ արտարժութային ավանդները նվազել են 4.7%-ով (8.3 մլրդ դրամով): Նշվածին նպաստել են ինչպես շուկայի զարգացումները, այնպես էլ ««Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքը (ըստ որի՝ արտարժութային բանկային ավանդի երաշխավորված չափը 1 միլիոն ՀՀ դրամ է, իսկ դրամով բանկային ավանդի երաշխավորված չափը՝ 2 միլիոն ՀՀ դրամ), ինչպես նաև դրամայնացմանն ուղղված այլ գործընթացներ:

Հաշվետու տարում իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորություններն ավելացել են 10.6%-ով, որին նպաստել է ինչպես իրավաբանական անձ-հաճախորդների քանակի ավելացումը, այնպես էլ առանձին հաճախորդների հաշիվների խոշորացումը. իրավաբանական անձ-հաճախորդների քանակն ավելացել է 9.0%-ով (3.3 հազարով), իսկ վերջիններիս ընթացիկ հաշիվները՝ 8.4%-ով (4.3 հազարով):


Ֆիզիկական անձանց ցպահանջ պարտավորություններն աճել են 11.9%-ով, որին առավելապես նպաստել է ֆիզիկական անձանց հաշիվների խոշորացումը, քանի որ տարվա ընթացքում ֆիզիկական անձ-հաճախորդների քանակն ավելացել է 8.6%-ով, իսկ վերջիններիս հաշիվների քանակը՝ 1.4%-ով:

Գծապատկեր 4. Բանկային համակարգի ցպահանջ ավանդների աճի միտումները



Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային հաշիվները ավելացել են համապատասխանաբար 56.4%-ով և 82.1%-ով, որոնք էապես գերազանցել են վերջիններիս ավանդների մեծության աճի տեմպերը. ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ծավալներն ավելացել են 26.3%-ով, իրավաբանական անձանցը՝ 9.7%-ով: Սա փաստում է, որ տարվա ընթացքում հիմնականում աճել են մանրածավալ ավանդները:


Գծապատկեր 5. Բանկային համակարգի ժամկետային ավանդների աճի միտումները



Բանկային համակարգի ներգրաված միջոցների կառուցվածքը

2006 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններում ծախսատար պարտավորությունների տեսակարար կշիռը կազմել է 91.7%՝ (նախորդ տարի՝ 92.3%): Տարվա ընթացքում ցպահանջ պարտավորությունների աճի տեմպը (10.9% աճ) զիջել է ընդհանուր պարտավորությունների աճի տեմպը (16.9% աճ), ինչի արդյունքում, ցածր ծախսատար ցպահանջ պարտավորությունների բացառման դեպքում, ծախսատար ժամկետային պարտավորությունների տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ ավելացել է 0.5 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 48.9%: Տարեվերջին ընդհանուր պարտավորությունների կազմում ցպահանջ պարտավորությունների (ֆիզիկական և իրավաբանական անձանց) տեսակարար կշիռը նվազել է 2.2 տոկոսային կետով:

Գծապատկեր 6. Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքը



1. Բանկային թղթակցային հաշիվներ, 2. Այլ պարտավորություններ բանկերի (ներառյալ ԿԲ) և այլ ֆինանսական կազմ. նկատմամբ, 3. Ցպահանջ պարտավորություններ, 4. Ժամկետային պարտավորություններ, 5. Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ, 6. Հաշվարկված վճարվելիք տոկոսներ, 7. Այլ պարտավորություններ

Համակարգի ընդհանուր պարտավորությունների միջին կշռված ժամկետայնությունը կազմում է մոտ կես տարի: Ներգրաված միջոցների 46%-ը ցպահանջ է (ավանդներ, բանկային հաշիվներ, թղթակցային հաշիվներ և այլ), 42%-ը՝ 1-ից 12 ամիս ժամկետայնությամբ և 12%-ը՝ մեկ տարուց ավելի ժամկետայնությամբ:

Առևտրային բանկերի հաճախորդները

Հաշվետու տարվա ընթացքում բանկային համակարգի կողմից սպասարկվող իրավաբանական և ֆիզիկական անձանց քանակն ավելացել է 8.6%-ով կամ 60.7 հազարով (հիմնականում ֆիզիկական անձանց աճի հաշվին) և տարեվերջին կազմել 763.3 հազար: Սպասարկվող ֆիզիկական անձ-հաճախորդների քանակը կազմել է 723.6 հազար, իսկ իրավաբանական անձ-հաճախորդների քանակը՝ 39.7 հազար:


Տարվա ընթացքում բանկային հաշիվների քանակն ավելացել է 3.4%-ով և կազմել 881.9 հազար, որի 96%-ը՝ ընթացիկ, 4%-ը՝ ժամկետային հաշիվներն են: Ընթացիկ հաշիվների քանակն ավելացել է 1.9%-ով կամ 15.5 հազարով (հիմնականում ֆիզիկական անձանց հաշիվների աճի արդյունքում) և տարեվերջին կազմել է 844.9 հազար: Ժամկետային հաշիվների քանակը ավելացել է 57.0%-ով կամ 13.5 հազարով (հիմնականում ֆիզիկական անձանց ժամկետային հաշիվների աճի հաշվին) և տարեվերջին կազմել 37.0 հազար: Ֆիզիկական անձանց ժամկետային հաշիվների քանակի կտրուկ աճին էապես նպաստել է նաև ավանդների երաշխավորման համակարգի գործունեությունը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐԸ

Բանկային համակարգի տեղաբաշխած միջոցների աճի միտումները


2006 թվականին ՀՀ բանկային համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել են 19.0%-ով (83.8 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 524.5 մլրդ դրամ:

Գծապատկեր 7. Բանկային համակարգի ընդհանուր ակտիվների միտումները



Հաշվետու տարում ընդհանուր ակտիվների կազմում զգալի ավելացել են տնտեսությանը տրամադրված վարկերը և պետական պարտատոմսերում ներդրումները, որոնց աճի տեմպերը գերազանցել են ակտիվների աճի տեմպը:

Գծապատկեր 8. Բանկային համակարգի ակտիվների աճի միտումները



1. Կանխիկ դրամական միջոցներ, 2. Թղթակցային հաշիվներ և այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ), 3. Պետական արժեթղթեր (ներառյալ ռեպոն), 4. Վարկեր տնտեսությանը, 5. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ, 6. Հիմնական միջոցներ, 7. Այլ արժեթղթեր, 8. Լիզինգ, ֆակտորինգ, 9. Այլ ակտիվներ

ԿԲ-ում թղթակցային հաշիվներն աճել են 25.6%-ով (11.1 մլրդ դրամով), իսկ այլ բանկերում նոստրո թղթակցային հաշիվները նվազել են 15.9%-ով (8.5 մլրդ դրամով): Նոստրո թղթակցային հաշիվներն առանձնանում են կենտրոնացվածությամբ ինչպես աշխարհագրական առումով, այնպես էլ ըստ ռեզիդենտայնության: Թղթակցային հաշիվների 97.4%-ը տեղաբաշխված է ոչ ռեզիդենտ բանկերում (նախորդ տարի՝ 96.0%-ը): 31.12.2006 թ. դրությամբ ԱՄՆ բանկերում ներդրված է ոչ ռեզիդենտ բանկերում թղթակցային հաշիվների ընդհանուր ծավալի 53%-ը, եվրոպական բանկերում՝ 39%-ը, Ռուսաստանի բանկերում՝ 5%-ը և այլ երկրների բանկերում՝ 3%-ը (31.12.2005թ.՝ համապատասխանաբար 37%, 50% և 7%):

Պետական արժեթղթերում ներդրումների ծավալները (ներառյալ ռեպո համաձայնագրերը) ավելացել են 36.9%-ով կամ 22.1 մլրդ դրամով և տարեվերջին կազմել են 81.9 մլրդ դրամ: 2006 թվականի վերջին պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի միջին եկամտաբերությունը կազմել է 5.12%, պետական գանձապետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերինը (ներառյալ մասնակի մարումներով)՝ 6.11%, որոնք տարեսկզբի նկատմամբ աճել են համապատասխանաբար 1.38 և 1.02 տոկոսային կետերով: ԿԲ կողմից թողարկված պարտատոմսերի միջին եկամտաբերությունը կազմել է

5.46%: Պարտատոմսերում բանկային համակարգի կողմից կատարված ներդրումների աճը հիմնականում պայմանավորվել է, զգալի ցպահանջ պարտավորությունների առկայության պայմաններում, եկամտաբեր բարձր իրացվելի ակտիվների՝ անհրաժեշտ բավարար մակարդակի ապահովման նկատառումով:


Այլ արժեթղթերում ներդրումների ծավալները աճել են ընդամենը 226 մլն դրամով և տարեվերջին կազմել 1.2 մլրդ դրամ:

Բանկային համակարգի հիմնական միջոցները տարվա ընթացքում աճել են 22.7%-ով և տարեվերջին կազմել 30.7 մլրդ դրամ, որը ընդհանուր կապիտալի 25.5%-ն է և ընդհանուր ակտիվների 5.8%-ը: Հիմնական միջոցների մեծությունը բոլոր բանկերում զիջել է ընդհանուր կապիտալի մեծությանը, ինչը վկայում է, որ բանկերի հիմնական միջոցները ձեռք չեն բերված փոխառու միջոցների հաշվին:

Բանկային համակարգի տեղաբաշխած միջոցների կառուցվածքը

2006 թվականի վերջի դրությամբ բանկային համակարգի եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում կազմել է 73.3% (նախորդ տարի՝ 73.6%): Առանց ցածր եկամտաբեր թղթակցային հաշիվների, մնացյալ եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում կազմել է 65.9% (նախորդ տարի՝ 64.5%):

Գծապատկեր 9. Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը



1. Կանխիկ դրամական միջոցներ, 2. Թղթակցային հաշիվներ և այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ), 3. Պետական արժեթղթեր, 4. Վարկեր տնտեսությանը, 5. Պահանջներ ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, 6. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ, 7. Հիմնական միջոցներ, 8. Այլ արժեթղթեր, 9. Լիզինգ, ֆակտորինգ, 10. Այլ ակտիվներ

Տարվա ընթացքում տնտեսությանը տրամադրված վարկերի և պետական պարտատոմսերում կատարված ներդրումների աճի տեմպերը գերազանցել են ընդհանուր ակտիվների աճի տեմպը, որը հանգեցրել է ակտիվների կազմում վարկերի և պետական պարտատոմսերում ներդրումների տեսակարար կշիռների 2-ական տոկոսային կետերով աճի:

Համակարգի ընդհանուր ակտիվների միջին կշռված ժամկետայնությունը տատանվում է մեկ տարվա շրջանակներում: Տեղաբաշխված միջոցների 26%-ը ցպահանջ է, 47%-ը՝ 1-ից 12 ամիս ժամկետայնությամբ և 27%-ը՝ մեկ տարուց ավելի և անժամկետ ժամկետայնություններով:

Բանկային համակարգի վարկային ներդրումները

Տարվա ընթացքում բանկային համակարգի վարկային ներդրումներն[3] ավելացել են 24.6%-ով (51.1 մլրդ դրամով) և կազմել 259.3 մլրդ դրամ: Դրամով վարկային ներդրումներն ավելացել են 62.2%-ով, իսկ արտարժույթով վարկային ներդրումները՝ 3.1%-ով, որի արդյունքում դրամով վարկային ներդրումների տեսակարար կշիռը ընդհանուր վարկային ներդրումներում աճել է 11.0 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 47.2%:

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումները նվազել են 19.2%-ով և կազմել 15.9 մլրդ դրամ:

Ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումներն ավելացել են 29.1%-ով և կազմել 243.4 մլրդ դրամ:


Հաշվետու տարում տնտեսության բոլոր ճյուղերում արձանագրվել է վարկային ներդրումների աճ (արդյունաբերության ճյուղերը դիտարկվել են որպես մեկ համընդհանուր ճյուղ): 2006 թվականին հատկանշական աճ է արձանագրվել հիփոթեքային վարկերում. աճել են 114.0%-ով (12.7 մլրդ դրամով): Զգալի է եղել նաև նաև սպառողական՝ 34.5% (17.5 մլրդ դրամով), առևտրի ճյուղի՝ 17.6% (7.4 մլրդ դրամով), շինարարության ճյուղի՝ 46.5% (3.7 մլրդ դրամով), հանրային սննդի ու սպասարկման այլ ոլորտների՝ 34.9% (3.0 մլրդ դրամով) վարկերի աճը:

Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կառուցվածքում 2006 թվականին կտրուկ աճել է հիփոթեքային վարկերի տեսակարար կշիռը: Բանկային համակարգի վարկերը հիմնականում կենտրոնացված են սպառողական, առևտրի ոլորտի և արդյունաբերության ճյուղի վարկերում:

---

[3] *Վարկային ներդրումներում ներառվում են տնտեսության վարկերը, լիզինգը, ֆակտորինգը և ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված վարկերն ու ավանդները:*

Գծապատկեր 10. Ռեզիդենտներին տրված վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական, 9. Հիփոթեքային, 10. Այլ ճյուղեր

Բանկային համակարգի ըստ տնտեսության ճյուղերի վարկավորման՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը, հիմնականում ցածր տեսակարար կշիռ ունեցող հիփոթեքային վարկերի կտրուկ աճի հաշվին, նախորդ տարվա համեմատ փոքր-ինչ նվազել է՝ 0.011-ով և կազմել 0.17, ինչը համարվում է ցածր և վկայում է նվազ կենտրոնացվածության մասին: Նույն ցուցանիշի մեծությունը, ըստ բանկերի միջինի, կազմել է 0.25, ինչը վկայում է, որ մի շարք բանկերում վարկավորման ճյուղային կենտրոնացվածությունը համեմատաբար բարձր մակարդակ ունի:

Երկարաժամկետ վարկերի պահանջարկի աճի պայմաններում հաշվետու տարում վարկային ներդրումներում երկարաժամկետ (1 տարի և ավելի ժամկետայնությամբ) վարկերի տեսակարար կշիռը աճել է 1.5 տոկոսային կետով և կազմել 57.9%: Բանկային համակարգում դեռևս նկատվում է «երկար փողերի» սղություն, որը երկարաժամկետ վարկեր տրամադրելու կարևորագույն նախապայմանն է:

Տնտեսությունում ձևավորված երկարաժամկետ վարկերի պահանջարկը մասամբ բավարարում են միջազգային ֆինանսական կազմակերպությունների ծրագրերի շրջանակներում

բանկերի միջնորդությամբ տրամադրվող երկարաժամկետ նպատակային վարկերը: ՀՀ տարածքում գործող 8 բանկեր սպասարկում են Համաշխարհային բանկի «Ձեռնարկությունների զարգացման», Գերմանա-հայկական հիմնադրամի, Համաշխարհային բանկի «Գյուղատնտեսության բարեփոխումների աջակցման», Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի «Հյուսիսարևմտյան գյուղատնտեսական ծառայությունների ծրագրի», Միջազգային ֆինանսական կորպորացիայի «Փոքր և միջին բիզնեսի զարգացման» և «Հիփոթեքային վարկավորման» ծրագրերի, Կոմերցբանկի, Համաշխարհային բանկի «Միկրո և փոքր բիզնեսի» և այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում իրականացվող վարկային ծրագրերը: 31.12.2006 թ. դրությամբ ծրագրերի վարկավորման հիմնական ուղղություններ են եղել առևտուրը՝ ընդհանուր վարկավորման ծավալի 38.4%-ը, գյուղատնտեսությունը՝ 17.3%-ը, սպառողականը՝ 13.5%-ը և սպասարկման ոլորտը՝ 8.9%-ը:


Նշված ծրագրերի շրջանակներում բանկերի կողմից տրամադրված վարկերը հաշվետու տարում աճել են 11.8%-ով և տարեվերջին կազմել են 27.8 մլրդ դրամ: Այս վարկերի վերադարձելիության աստիճանն անհամեմատ բարձր է, ինչի մասին է վկայում ժամկետանց վարկերի 0.4% կշիռը: Միջազգային ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերի մոտ 79%-ը մեկ տարուց ավելի ժամկետով է, 18%-ը՝ 6 ամսից մեկ տարի ժամկետով և 3%-ը՝ մինչև 6 ամիս ժամկետով:

Վարկային պորտֆելի որակը

2006 թվականի ընթացքում չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի (ներառյալ թղթակցային հաշիվները) մեծությունը աճել է 73.6%-ով և կազմել 7.2 մլրդ դրամ, իսկ ստանդարտ ակտիվների մեծությունը՝ 12.2%-ով և կազմել 291.1 մլրդ դրամ: Արդյունքում՝ ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի (ներառյալ թղթակցային հաշիվները) տեսակարար կշիռը նվազել է 0.8 տոկոսային կետով և կազմել 97.6%:

Տարեվերջին չաշխատող ակտիվների 0.9%-ը բաժին է ընկել ոչ ռեզիդենտներին, իսկ 99.1%-ը՝ ռեզիդենտներին: Ռեզիդենտների վարկային ներդրումներում չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է եղել շինարարության ճյուղին տրամադրված վարկերում՝ 9.5%, հանրային սննդին և սպասարկման այլ ոլորտներին տրամադրված վարկերում՝ 4.9%: Չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը ցածր է եղել սպառողական, առևտրի, տրանսպորտի ու կապի ճյուղերում՝ 2.0%:

Գծապատկեր 11. Բանկային համակարգի չաշխատող ակտիվների աճի միտումները



1. Հսկվող դասի վարկեր և դեբիտորական պարտքեր, 2. Ոչ ստանդարտ դասի վարկեր և դեբիտորական պարտքեր, 3. Կասկածելի դասի վարկեր և դեբիտորական պարտքեր

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ


Բանկային համակարգի եկամտաբերությունը

2006 թվականին բանկային համակարգի չբաշխված շահույթը կազմել է 16.9 մլրդ դրամ: Տարվա ընթացքում բոլոր բանկերն աշխատել են շահույթով:

Բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները նախորդ տարվա համեմատ դրսևորել են աճի միտում. բանկային համակարգի շահութաբերությունն ըստ ակտիվների (զուտ շահույթի հարաբերությունն ակտիվների միջին տարեկան մեծությանը) կազմել է 3.6%, իսկ ըստ կապիտալի (զուտ շահույթի հարաբերությունը կապիտալի միջին տարեկան մեծությանը)՝ 15.9%: Նույն ցուցանիշները 2005 թվականին համապատասխանաբար կազմել են 3.0% և 15.3%: Բանկային համակարգի զուտ գործառնական մարժան[4] հաշվետու տարում ավելացել է 0.6 տոկոսային կետով՝ կազմելով 4.9%:

[4] *Զուտ գործառնական մարժան հավասար է զուտ տոկոսային և զուտ ոչ տոկոսային եկամուտների գումարի և ընդհանուր ակտիվների միջին տարեկան մեծության հարաբերությանը:*

Գծապատկեր 12. Շահութաբերության ցուցանիշները՝ ըստ 21 շահութաբեր բանկերի



Շահութաբեր 21 բանկերի շահույթի՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.03-ով և կազմել 0.09 միավոր, որը բնութագրում է շահութաբեր բանկերի միջև համակարգի շահույթի կենտրոնացվածության նվազումը:

Բանկային համակարգի ծախսերի և եկամուտների կառուցվածքը

Հաշվետու տարում բանկային համակարգի զուտ շահույթը գերազանցել է նախորդ տարվա շահույթը 40.8%-ով (4.9 մլրդ դրամով), ինչը հիմնականում պայմանավորվել է վարկերի արագատեմպ աճի արդյունքում տոկոսային եկամուտների զգալի աճով: 2006 թվականին առևտրային բանկերը շարունակել են ակտիվ գործունեություն իրականացնել վարկային շուկայում, որտեղ պահպանվել է միջբանկային մրցակցությունը:

Այսպես, նախորդ տարվա համեմատ, բանկային համակարգի տոկոսային եկամուտների աճը պայմանավորվել է տնտեսությանը տրամադրված վարկերից ստացված տոկոսային եկամուտների 30.0% (7.9 մլրդ դրամով) աճով: Վարկերից ստացված տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր տոկոսային եկամուտների կազմում մնացել է գրեթե նույնը՝ կազմելով 80.4%:

Ոչ տոկոսային եկամուտների կազմում այս տարի բանկային համակարգի միջնորդավճարներից ստացված եկամուտներն ավելացել են 11.6%-ով (1.1 մլրդ դրամով)՝ պայմանավորված փոխանցումների ծավալների զգալի աճով: Ոչ տոկոսային եկամուտների 50.2%-ը

բաժին է ընկել միջնորդավճարներից ստացված եկամուտներին, 29.4%-ը՝ արտարժույթի առք ու վաճառքից ստացված եկամուտներին:

Տոկոսային ծախսերում 53.4% տեսակարար կշիռ ունեցող ժամկետային ավանդների դիմաց վճարվելիք տոկոսագումարները ավելացել են 14.1%-ով (820 մլն դրամով):


Ոչ տոկոսային ծախսերում 44.5% տեսակարար կշիռ կազմող «Հաշվեգրված աշխատավարձ և դրան հավասարեցված միջոցներ» հոդվածով ծախսերը նախորդ տարվա համեմատ ավելացել են 26.1%-ով (2.7 մլրդ դրամով), իսկ բանկային համակարգի աշխատողների թվաքանակն ավելացել է 15.3%-ով: Նշվածը վկայում է, որ տարվա ընթացքում, ինչպես և նախորդ տարի, դարձյալ արձանագրվել է բանկային համակարգի միջին աշխատավարձի բարձրացում:

Ընդհանուր առմամբ, նախորդ տարվա համեմատ, հաշվետու տարում համախառն եկամուտներն ավելացել են 15.7%-ով (11.8 մլրդ դրամով), իսկ համախառն ծախսերը՝ 10.1%-ով (6.0 մլրդ դրամով):

Համախառն եկամուտների կազմում, նախորդ տարվա համեմատ, տոկոսային եկամուտներն ավելացել են 30.3%-ով, ոչ տոկոսային եկամուտները նվազել են 1.2%-ով և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձը ավելացել է 10.4%-ով:


Ծախսային մասում, նախորդ տարվա համեմատ, տոկոսային ծախսերն ավելացել են 20.6%-ով, ոչ տոկոսային ծախսերը՝ 6.5%-ով, իսկ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին մասհանումները՝ 9.8%-ով:

Գծապատկեր 13. Բանկային համակարգի ծախսերը և եկամուտները



Եկամուտների և ծախսերի վերոնշված աճի արդյունքում համախառն եկամտի կազմում փոքր-ինչ աճել են տոկոսային եկամտի, իսկ համախառն ծախսերում՝ տոկոսային ծախսերի տեսակարար կշիռները:

Գծապատկեր 14. Բանկային համակարգի ծախսերի և եկամուտների կառուցվածքը



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ

Ըստ փորձագիտական գնահատումների՝ ՀՀ բանկային համակարգի ռիսկերը կառավարելի շրջանակներում են: Ներկայումս, բանկային համակարգի վարկերի արագատեմպ աճի պայմաններում, ՀՀ բանկային համակարգում ֆինանսական ռիսկերից առավելապես կարևորվում է վարկային ռիսկը, չնայած այն ցածր է գնահատվում միջազգային շուկայում դրսևորվող վարկային ռիսկի մակարդակի համեմատ:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկի պատշաճ կառավարումը բոլոր երկրների բանկային համակարգերում մշտապես կարևորվել է: Չնայած հաշվետու տարվա ընթացքում ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքում դասակարգված վարկերի և դեբիտորական պարտքերի (այսուհետ՝ չաշխատող ակտիվների) տեսակարար կշիռը աճել է 0.8 տոկոսային

կետով և կազմել 2.4%, այնուամենայնիվ վերջինս համարվում է բավականին ցածր ցուցանիշ: Չաշխատող ակտիվների մեծությունը կազմել է նորմատիվային ընդհանուր կապիտալի 6.9%-ը (նախորդ տարի՝ 5.0%): Հատկանշական է, որ եթե չաշխատող ակտիվների 7.2 մլրդ դրամ մեծությունից հանենք ակտիվների հնարավոր կորուստների հատուկ պահուստի 1.2 մլրդ դրամ մեծությունը, ապա մնացյալ՝ ծածկույթ չունեցող չաշխատող ակտիվների մեծությունը կկազմի նորմատիվային կապիտալի 5.8%-ը: Վերջինս նշանակում է, որ նույնիսկ եթե կառուցվի ստրես-սցենար, ըստ որի՝ դասակարգված ակտիվներն ամբողջությամբ դուրս գրվեն (անտեսվում է գրավադրված գույքի արժեքը), ապա բանկային համակարգի վնասը չի գերազանցի նորմատիվային կապիտալի 5.8%-ը՝ վկայելով վարկային ռիսկի տեսանկյունից բանկային համակարգի կայունությունը: Վերջին տարիներին վարկային ռիսկի նվազմանն էապես նպաստել է նաև վարկային ռեգիստրի գործունեությունը (2003 թ. հունվարի 1-ից գործում է ԿԲ-ում), որի միջոցով բանկերը նախապես տեղեկացվում են վարկառուի վարկային պատմությանը:

Վերջին երեք տարիներին ակտիվների միջին աճը կազմել է 23%, իսկ վարկերինը՝ 34%՝ չհանգեցնելով ակտիվների որակի էական վատացման: Տարվա ընթացքում զուտ մասհանումների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում կազմել է ընդամենը 0.4%, ըստ որի՝ կարելի է կատարել դատողություն բանկային վերահսկողության դրական արդյունքների մասին:

31.12.2006 թ. դրությամբ բանկային համակարգի մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը կազմել է նորմատիվային կապիտալի 12.3%-ը (բանկերի միջինը՝ 13.4%), խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ 80.3% (բանկերի միջինը՝ 81.4%), բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ 1.9%-ը (բանկերի միջինը՝ 2.2%), բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը՝ 5.5%-ը (բանկերի միջինը՝ 6.0%): Վերոնշյալ ցուցանիշների գծով բանկային համակարգի մեծությունների և առանձին բանկերի միջին մեծությունների շեղումները փոքր են՝ վկայելով, որ առանձին բանկերում կտրուկ շեղումներ չկան, և ռիսկերը կառավարելի շրջանակներում են:

Արտարժութային ռիսկ

Հաշվետու տարում դարձյալ դրսևորվել են ՀՀ դրամի՝ այլ արժույթների նկատմամբ փոխարժեքի բավականին մեծ տատանումներ: 2006 թվականին արձանագրվել է ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի 10.0% միջին տարեկան արժևորում, իսկ ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ 23.8%:

Այլ արժույթների նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի տատանումների հետևանքով 2006 թվականին բանկային համակարգն արտարժույթի վերագնահատման արդյունքում ունեցել է ընդհանուր 272 մլն դրամ վնաս՝ բանկային համակարգի նորմատիվային կապիտալի 0.3%-ը (նախորդ տարի վնասը կազմել է կապիտալի 0.5%-ը): Արտարժույթի վերագնահատման արդյունքում վնասներ է ունեցել 9 բանկ, իսկ եկամուտ՝ 12 բանկ: Հաշվետու տարվա ընթացքում բանկային համակարգն արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների արդյունքում ապահովել է 6.4 մլրդ դրամ եկամուտ (նախորդ տարվա համեմատ ավելացել է 6%-ով): Տարեվերջի դրությամբ բանկային համակարգի առաջին խմբի համախառն արտարժութային դիրքը կազմել է 4.4%, իսկ երկրորդ խմբի զուտ դիրքը՝ 1.1%՝ համապատասխանաբար պահանջվող առավելագույնը 15% և 5% նորմատիվային մակարդակների դեպքում:

Արտարժույթի ռիսկի գնահատման VAR (Value at risk) մեթոդաբանությամբ կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ 2007 թվականին դրամի փոխարժեքի տատանումների հետևանքով բանկային համակարգի արտարժույթի վերագնահատման արդյունքում հնարավոր վնասները 95% հավանականությամբ չեն գերազանցի 200 մլն դրամի սահմանաչափը[5]:

Իրացվելիության ռիսկ

Ինչպես և նախորդ տարի, 2006 թվականին վարկային ներդրումների աճի տեմպը գերազանցել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը, ինչի արդյունքում բարձր իրացվելի ակտիվների աճի տեմպը զիջել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը: Չնայած ընդհանուր ակտիվներում բարձր իրացվելի ակտիվների տեսակարար կշիռը նվազել է 2 տոկոսային կետով և կազմել 40%, սակայն վերջինս համարվում է բավականին բարձր ցուցանիշ՝ վկայելով բանկային համակարգի իրացվելիության ռիսկի ցածր մակարդակի մասին: Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվներն աճել են 14%-ով և կազմել 209.5 մլրդ դրամ: 2006 թվականին բանկային համակարգի ընդհանուր իրացվելիության ցուցանիշը նվազել է 2.9 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 41.2%, ընթացիկ իրացվելիության ցուցանիշը՝ 4.4 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 106.1%: Ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ցուցանիշները պահանջվող նորմատիվային մակարդակից բավականին բարձր են և իրացվելիության խնդրի առաջացման առումով վտանգ չեն ներկայացնում: Ըստ մարմանը մնացած ժամկետայնության խմբերի՝ բանկային համակարգի ակտիվների ծավալները 2007թ. կգերազանցեն պարտավորությունների մեծությունները, ինչից ելնելով էլ

---

[5] Հաշվարկների հիմքում 31.12.2006 թ. դրությամբ բանկերի կողմից ներկայացված արտարժութային բաց դիրքերն են, և փաստացի վնասի մեծությունը կարող է փոքր-ինչ ավելին լինել՝ կախված 2007 թվականի ընթացքում արտարժութային բաց դիրքերի փոփոխությունների աստիճանից:

կանխատեսվում է, որ, այլ հավասար պայմաններում, 2007 թվականին բանկային համակարգը զերծ կմնա իրացվելիության ռիսկով պայմանավորված այլընտրանքային վնասներից:

Իրացվելիության տեսանկյունից դիտարկվում է նաև բանկային համակարգի պարտավորությունների կառուցվածքը՝ ըստ կենտրոնացումների. 2006 թվականին արձանագրվել է ընդհանուր պարտավորություններում «խոշոր» պարտավորությունների[6] տեսակարար կշռի 0.4 տոկոսային կետով աճ՝ կազմելով 27.5%:

Գնային ռիսկ

Գնային ռիսկի տեսանկյունից հատկանշական է, որ համեմատաբար ռիսկային ոչ պետական արժեթղթերում բանկային համակարգի կողմից իրականացված ներդրումները կազմել են 1.2 մլրդ դրամ, որոնց գների, օրինակ՝ 10%-ով նվազման և/կամ աճի դեպքում համակարգի կորուստը և/կամ օգուտը կկազմի նորմատիվային կապիտալի 0.1 %-ը:

Հիմնական միջոցների գների ոչ կտրուկ տատանումները ևս խոշոր վնասների չեն հանգեցնի: Հիմնական միջոցների շուկայական գների, օրինակ՝ 10%-ով նվազման և/կամ աճի դեպքում համակարգի կորուստը և/կամ օգուտը կկազմի նորմատիվային կապիտալի 2.9%-ը: Տարեվերջի դրությամբ բանկային համակարգի հիմնական միջոցների մեծությունը կազմել է 30.7 մլրդ դրամ, իսկ սեփականություն հանդիսացող բռնագանձված անշարժ գույքի մեծությունը՝ 775 մլն դրամ: Գնահատվել է նաև անշարժ գույքի գների նվազման ազդեցությունը վարկային պորտֆելի որակի վրա: Ըստ ստրես-սցենարների հաշվարկների՝ անշարժ գույքի շուկայական արժեքի 30% արժեզրկման դեպքում խոցելի վարկային պորտֆելի[7] 50%-ի չվերադարձման հետևանքով բանկային համակարգի վնասը կկազմի նորմատիվային ընդհանուր կապիտալի 9.1%-ը: Գների կտրուկ անկման հավանականությունը, ինչպես նաև բանկային համակարգի գնային ռիսկը, ըստ փորձագիտական գնահատումների, համարվում է ցածր:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը բանկային համակարգում նույնպես կառավարելի շրջանակներում է: Ակտիվների և պարտավորությունների միջին ժամկետայնությունը կարճ է և գտնվում է 1

---

[6] Այն բոլոր միջոցների հանրագումարը, որոնք առանձին վերցրած գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5% սահմանաչափը՝ առանց հաշվի առնելու փոխկապակցվածությունը:

[7] Խոցելի վարկային պորտֆելը բանկի այն վարկերի մնացորդների հանրագումարն է, որոնց մնացորդային մեծությունները գերազանցում են դրանց դիմաց գրավադրված անշարժ գույքի 30% արժեզրկված արժեքները:

տարվա շրջանակներում, որը շուկայական տոկոսադրույքների փոփոխություններին արագ արձագանքելու և վերանայելու հնարավորություն է ստեղծում: Միևնույն ժամանակ, տոկոսադրույքի ռիսկի գնահատման դյուրացիայի մեթոդիկայով կատարված գնահատումները ցույց են տալիս, որ ակտիվների և պարտավորությունների միջին կշռված ժամկետայնությունների ճեղքվածքը փոքր մեծություն է (մոտ կես տարի), ինչը վկայում է, որ շուկայական տոկոսադրույքների համամասնորեն տատանումները զգալի ազդեցություն չեն թողնի բանկային համակարգի կապիտալի տնտեսական արժեքի վրա: Ըստ հաշվարկների՝ ընդհանուր շուկայական տոկոսադրույքների (ակտիվների և պարտավորությունների) 1%-ով նվազման դեպքում բանկային համակարգի կապիտալի տնտեսական արժեքը կավելանա 1.2 մլրդ դրամով:

Չնայած ներկայումս բանկային համակարգի տոկոսադրույքի ռիսկը բավականաչափ զսպված է, այնուամենայնիվ տոկոսադրույքի ռիսկի գնահատման և կառավարման շարունակական գործընթացը էապես կարևորվում է: Այսպես, 2006 թվականին բանկային համակարգի զուտ տոկոսային եկամուտները նախորդ տարվա նույն մեծությունը գերազանցել են 35%-ով՝ պայմանավորված վարկերի ծավալների արագընթաց աճով: Տոկոսային եկամուտները կազմել են բանկային համակարգի ընդհանուր եկամուտների 50%-ը՝ փաստելով տոկոսադրույքի ռիսկի կառավարման կարևորությունը:

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԱՅԼ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2006 թվականի ընթացքում վարկային կազմակերպության գործունեության լիցենզիա է ստացել յոթ ընկերություն՝ «Ֆինքա» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն, «Արեգակ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ն, «Նոր Հորիզոն» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ն, «Մալաթիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ն, «Նորվիկ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն, «էկումենիկ եկեղեցական փոխատվական ֆոնդ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ն և «Գառնի Ինվեստ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն: Տարեվերջին ՀՀ տարածքում գործել են տասնյոթ վարկային կազմակերպություններ (տասներկու մասնաճյուղերով), որոնցից երկուսը լիզինգային կազմակերպություններ են, մեկը՝ վարկային միություն և տասնչորսը՝ ունիվերսալ վարկային կազմակերպություն:

Վերջին տարիներին վարկային կազմակերպությունները, բանկերի համեմատությամբ, դրսևորում են արագատեմպ զարգացման միտումներ. 2006 թվականին վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի, պարտավորությունների և ակտիվների աճի միտումները մի քանի անգամ գերազանցել են բանկային համակարգի համապատասխան աճի միտումները, ըստ որի՝ վարկային կազմակերպությունների ակտիվների մեծությունը տարեվերջին կազմել է բանկային համակարգի ակտիվների 3.9%-ը (տարեսկզբին 1.8%): Թեպետ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի միջին շուկայական տոկոսադրույքները փոքր-ինչ գերազանցում են բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի միջին շուկայական տոկոսադրույքները, սակայն բնակչության լայն խավի համար վարկային կազմակերպությունների կողմից առաջարկվող վարկային ծառայությունները համարվում են ավելի մատչելի: Վարկային կազմակերպությունները բավականին ակտիվ վարկավորում են տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը: Զգալի ավելացել են նաև սպառողական և հիփոթեքային վարկերի ծավալները, ընդ որում՝ որոշ վարկային կազմակերպություններ մասնագիտացած են հիփոթեքային վարկավորման ոլորտում:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալը տարվա ընթացքում ավելացել է 92.6%-ով: Կապիտալի աճը հիմնականում տեղի է ունեցել տարվա ընթացքում լիցենզավորված յոթ, ինչպես նաև արդեն գործող չորս վարկային կազմակերպությունների կողմից կանոնադրական հիմնադրամի համալրման հաշվին: Վարկային կազմակերպությունների ընթացիկ տարվա չբաշխված շահույթը կազմել է 106 մլն դրամ, շահութաբերությունն ըստ

ակտիվների՝ 0.9%, իսկ ըստ կապիտալի՝ 1.8%: Տարեվերջին կապիտալը կազմել է 8.5 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 7.0%-ը (տարեսկզբին՝ 4.6%):

Պարտավորություններն ավելացել են 248.5%-ով (8.7 մլրդ դրամով) և կազմել 12.1 մլրդ դրամ: Պարտավորությունների աճը հիմնականում տեղի է ունեցել իրավաբանական անձանց փոխառությունների 3.5 մլրդ դրամ, բանկերի նկատմամբ պարտավորությունների 3.2 մլրդ դրամ և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների 1.5 մլրդ դրամ աճերի հաշվին:

Իրավաբանական անձանցից և ֆիզիկական անձ մասնակիցներից փոխառությունների ծավալը տարեվերջին կազմել է 5.4 մլրդ դրամ: Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ձեռք բերած միջոցների մեծությունը տարեվերջին կազմել է 5.9 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների մեծությունը տարվա ընթացքում աճել է 161.1%-ով (12.7 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 20.6 մլրդ դրամ: Ակտիվների կազմում զգալի ավելացել են վարկային ներդրումները (ներառյալ լիզինգը)՝ 168%-ով և կազմել են 16.6 մլրդ դրամ: Տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում արձանագրվել է տրամադրված վարկերի ծավալների աճ:

ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՇՈՒԿԱՆ

2006 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում լիցենզավորված ապահովագրական ընկերությունների թիվը կազմել է 15, ապահովագրական բրոքերային ընկերությունների թիվը՝ 6: 2006 թվականի ընթացքում դադարեցվել է ութ ապահովագրական ընկերության և մեկ ապահովագրական բրոքերային ընկերության՝ «Ավուար», «Էրմեդ» ՓԲԸ-ների, «Երաշխիք», «Ինօրիենք», «Գոբա», «Ռենեսանս Ինշուրանս», «Սամգաս», «Հ և Ֆ» ՍՊԸ-ների ապահովագրական գործունեության իրականացման և «Սահա» ՍՊԸ-ի ապահովագրական բրոքերային (միջնորդային) գործունեության իրականացման լիցենզիաների գործողությունը:

2006 թվականի ընթացքում ապահովագրական ընկերությունների սեփական կապիտալն ավելացել է 35.3%-ով (1.6 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 6.0 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 5.0%-ը:

Կապիտալի աճը հիմնականում պայմանավորվել է կանոնադրական հիմնադրամի 1.5 մլրդ դրամ աճով:

Ապահովագրական ընկերությունների ընդհանուր պարտավորությունները և ընդհանուր ակտիվները նվազել են համապատասխանաբար 51.6%-ով (2.8 մլրդ դրամով) և 12.7%-ով (1.3 մլրդ դրամով): Տարեվերջին ընդհանուր ակտիվների ծավալը կազմել է 8.6 մլրդ դրամ կամ բանկային համակարգի ակտիվների 1.6%-ը:

Ակտիվների և պարտավորությունների նվազումը հիմնականում պայմանավորվել է ապահովագրական ընկերությունների քանակի նվազմամբ: Ապահովագրական ընկերությունների ընդհանուր ակտիվների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել ընթացիկ ակտիվները՝ 76.7%, իսկ պարտավորություններն ամբողջությամբ ընթացիկ են եղել:

2006 թվականին ապահովագրավճարների մեծությունը կազմել է 5.9 մլրդ դրամ, իսկ վերաապահովագրավճարները՝ 3.7 մլրդ դրամ կամ ապահովագրավճարների 62.9%-ը:

Ապահովագրավճարների 76%-ը բաժին է ընկել ավիացիոն ռիսկերի (35%), ավտոտրանսպորտային միջոցների (21%), գույքի (13%) և պատասխանատվության (8%) ապահովագրության տեսակներին:

2006 թվականին ապահովագրական հատուցումների մեծությունը կազմել է 27.3 մլրդ դրամ, որից 27.0 մլրդ դրամը կամ 98.6%-ը վերաապահովագրողի մասնակցությունն է վնասի հատուցմանը:

Ընդամենը ապահովագրական հատուցումների մեջ 97.5%-ը բաժին է ընկել ավիացիոն ռիսկերի ապահովագրության գծով հատուցումներին: Սակայն, եթե զտենք ավիացիոն ռիսկերը, ապա հատուցումների 92%-ը կբաշխվի ավտոտրանսպորտային միջոցների (47%), բեռների (15%), գույքի (15%) և բժշկական (14%) ապահովագրության տեսակների միջև:

Ապահովագրական ընկերությունների վնասաբերության ցուցանիշը (ապահովագրական հատուցումների հարաբերությունը ապահովագրավճարներին) կազմել է 17.8%[8]:

Տարեվերջին ապահովագրական ընկերությունների գործող ապահովագրության պայմանագրերի քանակը եղել է 29.5 հազար հատ: Պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարների մեծությունը կազմել է 3.93 տրլն դրամ, որից 3.76 տրլն դրամը կամ 95.7%-ը վերաապահովագրողների ստանձնած պատասխանատվության մեծությունն է:

Ապահովագրական բրոքերային ընկերությունների ակտիվների մեծությունը 31.12.2006 թ. դրությամբ կազմել է 189.3 մլն դրամ, իսկ սեփական կապիտալի մեծությունը՝ 50.9 մլն դրամ:

ՀՀ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՆ

31.12.2006 թ. դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն են իրականացրել 20 ընկերություններ: Տարվա ընթացքում ՀՀ արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող ընկերությունների թիվը ավելացել է երկուսով. բրոքերային գործունեության լիցենզիա է ստացել «Թամրազյան և Ընկերներ»

[8] *Համակարգի իրական պատկերը ներկայացնելու համար ցուցանիշի հաշվարկում ներառված չեն ավիացիոն ռիսկերը:*

բրոքերային ՍՊԸ-ն, բրոքերային և հավատարմագրային գործունեությունների լիցենզիաներ է ստացել «Իկապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն: Բոլոր 20 ընկերություններն ունեն բրոքերային գործունեության լիցենզիա, ընդ որում՝ դրանցից 7-ը ունեն նաև հավատարմագրային կառավարման գործունեության լիցենզիա, իսկ 1-ը՝ նաև պահառուի լիցենզիա:

2006 թվականի վերջի դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում գործել է երկու ինքնակարգավորվող կազմակերպություն. «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպությունը» և արտարժույթի և արժեթղթերի առք/վաճառքի սակարկություններ կազմակերպող «Հայաստանի ֆոնդային բորսա ինքնակարգավորվող կազմակերպությունը»:

Մասնագիտացված ընկերությունների կողմից 2006 թ. ընթացքում կնքվել է 191.4 մլրդ դրամի գործարք, որից 7.2 մլրդ դրամի գործարքները կնքվել են բրոքերային գործունեության շրջանակներում (3.8%), իսկ 184.2 մլրդ դրամի գործարքները՝ դիլերային գործունեության շրջանակներում (96.2%):

ՀՀ արժեթղթերի շուկայում գործարքներն իրականացվել են 3 տիպի գործիքներով՝ պետական պարտատոմսեր, բաժնետոմսեր և այլ արժեթղթեր: Արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց համար շուկայի հիմնական գործիք են հանդիսանում պետական պարտատոմսերը, որոնք ընդհանուր գործարքների ծավալում կազմել են շուրջ 97%: Բաժնետոմսերով գործարքները կազմել են շուրջ 2.4%, իսկ այլ արժեթղթերով գործարքների տեսակարար կշիռը՝ 0.4%:

Պետական պարտատոմսերի շրջանառության ծավալների 40.3%-ը բաժին է ընկել պետական միջին ժամկետայնությամբ պարտատոմսերին, 59.2%-ը՝ պետական երկարաժամկետ պարտատոմսերին, 0.5%-ը՝ պետական կարճաժամկետ պարտատոմսերին:

Բաժնետոմսերով կնքված գործարքների 98%-ը, կորպորատիվ պարտատոմսերով կնքված գործարքների 55%-ը և պետական պարտատոմսերով կնքված գործարքների 1%-ը իրականացվել են բրոքերային գործունեության շրջանակներում: Դիլերային գործունեության շրջանակներում կնքվել է պետական պարտատոմսերով գործարքների 99%-ը:

Մասնագիտացված ընկերությունների կողմից իրականացված բրոքերային և դիլերային շրջանառության 97%-ը կատարվել է բորսայից դուրս: Կորպորատիվ պարտատոմսերով և բաժնետոմսերով գործարքների համապատասխանաբար 84%-ը և 95%-ը կնքվել են Հայաստանի ֆոնդային բորսայում:

2006 թվականի ընթացքում Հայաստանի ֆոնդային բորսայում արժեթղթերով իրականացված գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 2.6 մլրդ դրամ: Տարվա ընթացքում բորսայական առևտրին մասնակցել է 9 մասնագիտացված ընկերություն:

Տարվա վերջի դրությամբ ֆոնդային բորսայում ցուցակված են եղել թվով 36 հաշվետու թողարկողների արժեթղթեր: Հաշվետու թողարկող ընկերություններից 2-ը բանկ են, իսկ 1-ը՝ վարկային կազմակերպություն: Ընկերություններից 4-ը վարկանշվում են ՀՀ ԿԲ կողմից:

2006 թվականի ընթացքում ընկերությունների կողմից, ազդագրի կիրառմամբ, իրականացվել է արժեթղթերի տեղաբաշխման 3 դեպք, որից 1-ի ընթացքում կատարվել է բաժնետոմսերի տեղաբաշխում, իսկ մյուս երկու դեպքերում՝ կորպորատիվ պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում: Կորպորատիվ պարտատոմսերը տեղաբաշխվել են 1 վարկային և 1 շինարարական կազմակերպությունում՝ համապատասխանաբար 7.25 և 9.0 տոկոս տարեկան եկամտաբերությամբ, ընդ որում՝ վարկային կազմակերպության պարտատոմսերի 50%-ը երաշխավորված է USAID-ի կողմից:

31.12.2006 թ. դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող թողարկողների թիվը կազմել է 710 ընկերություն, իսկ ՀԿԴ-ում ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի սեփականատերերի թիվը կազմել է 130.9 հազար մարդ:

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԳՐԱՎԱՏՆԵՐԸ

31.12.2006 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 64 գրավատներ: Տարվա ընթացքում գրավատան գործունեության լիցենզիա են ստացել 13 ընկերություններ ու անհատ ձեռնարկատերեր, և 10 գրավատների լիցենզիաները ուժը կորցրած են ճանաչվել: Հաշվետու տարում արձանագրվել է գրավատների ընդհանուր ակտիվների մեծության 26% և գրավատների կողմից տրամադրված վարկերի մեծության 55% աճ: Գրավատների կողմից տրամադրված վարկային պայմանագրերի ընդհանուր թիվը տարեվերջին կազմել է 31.1 հազար հատ: Գրավատների ընդհանուր ակտիվների մեծությունը 31.12.2006 թ. դրությամբ կազմել է 2.5 մլրդ դրամ, գրավատների կողմից տրամադրված վարկերի ընդհանուր մեծությունը՝ 1.7 մլրդ դրամ:

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԵՐԸ ԵՎ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻԼԵՐՆԵՐԸ

31.12.2006 թ. դրությամբ ՀՀ տարածքում արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիա են ունեցել 288 փոխանակման կետեր (ներառյալ մասնաճյուղերը): Հաշվետու տարվա ընթացքում թվով 148 արտարժույթի փոխանակման կետերի լիցենզիաները ուժը կորցրած են

ճանաչվել: Արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիա է տրվել թվով 60 արտարժույթի փոխանակման կետերի: Նախորդ տարվա համեմատ հաշվետու տարվա ընթացքում արտարժույթի փոխանակման կետերում արձանագրվել է արտարժույթի առք ու վաճառքի ընդհանուր ծավալի աճ: ԱՄՆ դոլարի առքի ծավալներն աճել են 27%-ով, վաճառքի ծավալները՝ 23%-ով և կազմել համապատասխանաբար 324.8 մլն ԱՄՆ դոլար և 322.1 մլն ԱՄՆ դոլար: Եվրոյի առքի ծավալներն աճել են 11%-ով, վաճառքի ծավալները՝ 12%-ով և կազմել համապատասխանաբար 21.5 մլն եվրո և 21.2 մլն եվրո:

2006 թվականի ընթացքում արժութային դիլերի գործունեության լիցենզիա է տրամադրվել «Արմանե Գազպա» ՍՊԸ-ին: 31.12.2006 թ. դրությամբ ՀՀ տարածքում արտարժութային դիլերի գործունեության լիցեզիա են ունեցել 7 իրավաբանական անձինք: Տարվա ընթացքում արտարժութային դիլերների՝ ԱՄՆ դոլարի ընդհանուր առքի ծավալը կազմել է 7.0 մլն ԱՄՆ դոլար, վաճառքի ծավալը՝ 14.4 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարի առքի ծավալները կազմել են 15.9 մլն ԱՄՆ դոլար, վաճառքի ծավալները՝ 14.9 մլն ԱՄՆ դոլար):

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՎԾԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ՈՒ ՎԾԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊՐՈՑԵՍԻՆԳ ԵՎ ՔԼԻՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31.12.2006 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել է դրամական փոխանցումներ իրականացնող երեք ընկերություն՝ «Հայփոստ» ՓԲԸ-ն, «Արմենիան էքսպրես» ՓԲԸ-ն և «Դեպի տուն» ՍՊԸ-ն, ընդ որում՝ վերջին 2-ը լիցենզավորվել են հաշվետու տարվա ընթացքում: Վերոնշված կազմակերպությունները, միջազգային վճարային համակարգերին անդամակցելու միջոցով ապահովում են արտասահմանից ՀՀ ուղղված վճարումների իրականացումը: Տարվա ընթացքում դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները ՀՀ-ում իրենց հաճախորդներին կատարել են 5.3 մլրդ դրամի վճարում, իսկ արտասահման կատարվել է 1.1 մլրդ դրամի փոխանցում: Դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը առանց բանկային հաշիվների բացման կատարված միջազգային փոխանցումների ծավալում կազմել է 1%: Այս կազմակերպությունների միջոցով հաճախորդներին կատարված մեկ վճարման միջին ծավալը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 117 հազար դրամ:

ՀՀ տարածքում գործունեություն է ծավալում վճարային գործիքներ և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն: Վերջինիս կողմից իրականացվում է «Արքա» քարտերով վճարումների միասնական համա-

կարգի մասնակից 18 առևտրային բանկերի կողմից թողարկված «ԱրՔա», ինչպես նաև VISA և MasterCard միջազգային քարտային համակարգերի վճարային քարտերով կատարված գործառնությունների պրոցեսինգը: «ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնը ապահովում է քարտերի սպասարկումը ԱԳՄ-ների, POS-տերմինալների, իմպրինտերների միջոցով, ինչպես նաև ինտերնետ միջավայրում:

Հանդիսանալով «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի օպերատոր՝ պրոցեսինգային կենտրոնը հաշվետու տարվա ընթացքում ապահովել է 86 մլրդ դրամ ծավալի քարտային գործառնությունների իրականացում, այդ թվում՝ օտարերկրյա բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացվել է 10 մլրդ դրամ ծավալի գործառնություն:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման նպատակով 2006 թվականի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից կատարվել են վճարային համակարգերի իրավական դաշտի կարգավորման (տե՛ս «Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխությունները» բաժինը), անկանխիկ վճարումների զարգացման աշխատանքներ: Մշակվել է «Անկանխիկ վճարումների զարգացման միջոցառումների ծրագիրը», որը արժանացել է Կենտրոնական բանկի հավանությանը և ներկայացվել ՀՀ կառավարություն: Նշված ծրագրի շրջանակներում նախատեսվում է, համագործակցելով այլ գերատեսչական մարմինների հետ, իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ վճարահաշվարկային և այլ հարակից բնագավառներում, որոնց համալիր և ամբողջական կիրառումը կխրախուսի անկանխիկ վճարային գործիքների կիրառումը և անկանխիկ վճարումների զարգացումը:

Արտասահմանյան վճարային համակարգերին անդամակցության նպատակով հստակեցվել են վճարահաշվարկային ծառայություն մատուցող կազմակերպություններին ներկայացվող ֆինանսական, իրավական և այլ պահանջները, ինչը թույլ տվեց նվազեցնել վերջիններիս հնարավոր ռիսկերը միջազգային համակարգերին անդամակցելու և վճարահաշվարկային ծառայություն մատուցելու գործընթացում:

Մշակվել է «ՀՀ կենտրոնական բանկի կողմից վճարային համակարգի նկատմամբ հսկողության իրականացման հայեցակարգը», որով սահմանվել են վճարային համակարգերի հսկողության բնագավառում ԿԲ նպատակները, հսկողության շրջանակները, իրականացվող քաղաքականությունը, ինչպես նաև այլ իրավասու մարմինների հետ համագործակցության շրջանակները:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից նոր տիպի արժեթղթերի (ՀՀ պետական անժամկետ պարտատոմսերի, ինչպես նաև ՀՀ պետական խնայողական (արժեկտրոնային) պարտատոմսերի) թողարկումը և դրանց շրջանառությունը կարգավորելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկի «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգում» 2006 թվականին կատարվել են համապատասխան փոփոխություններ՝ ապահովելով դրանց թողարկման և շրջանառության պահանջները, մշակվել են համապատասխան արարողակարգեր:

Հետամուտ լինելով արժեթղթերի շուկայի զարգացմանը՝ ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի միջոցով բարձր վարկանիշ ունեցող առևտրային արժեթղթերով ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունների իրականացումը ապահովելու նպատակով մշակվել են մի շարք փաստաթղթեր՝ ուղղված իրավական դաշտի կարգավորմանը:

Հայաստանի ֆոնդային բորսայում իրականացվող բորսայական գործառնությունների վերջնահաշվարկի ընթացքում գործառնական ռիսկերը նվազեցնելու և այդ ընթացակարգը ավտոմատացնելու համար մշակվել են համապատասխան վճարային հաղորդագրություններ (ֆորմատներ), որոնք ապահովում են կատարված գործառնությունների վերջնահաշվարկի իրականացման նպատակով ձևավորված զուտ դիրքերի էլեկտրոնային եղանակով ներկայացումը ՀՀ կենտրոնական բանկ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տարածքում գործող մի շարք առևտրային բանկերի ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվել են տարբեր միջազգային վճարային համակարգերին անդամակցելու թույլտվություններ (VISA, MasterCard և AMEX միջազգային քարտային համակարգերին անդամակցելու թույլտվություններ):

2006 թվականի ընթացքում ՀՀ տարածքում անկանխիկ գործառնությունների ծավալն աճել է մոտ 12.6%-ով և կազմել 5494 մլրդ դրամ: Անկանխիկ վճարումներն իրականացվել են հիմնականում կրեդիտային վճարային գործիքներով՝ ծավալի 99.6%-ը և քանակի 91.4%-ը (այդ թվում՝ վճարային գործիքների ծավալի 61.8%-ը և քանակի 53.7%-ը կազմել են էլեկտրոնային եղանակով ներկայացված վճարման հանձնարարականները): Դեբետային գործիքներով կատարված վճարումների ծավալը կազմել է ընդհանուր վճարումների 0.4%-ը, իսկ քանակը՝ 8.6%-ը:

Պլաստիկ քարտերի թողարկումը և սպասարկումը իրականացվում է ՀՀ տարածքում գործող 20 առևտրային բանկերի կողմից: Այդ թվում՝ 18 առևտրային բանկեր թողարկում և սպասարկում են «ԱրՔա» միասնական վճարային համակարգի քարտեր: Հաշվետու տարվա ընթացքում «ԱրՔա» համակարգին անդամակցող բանկերի քանակը ավելացել է երկուսով (Արարատ բանկ, Հայբիզնես բանկ):

Տարվա ընթացքում ՀՀ բանկերի կողմից տրամադրված (շրջանառության մեջ գտնվող) պլաստիկ քարտերի քանակը ավելացել է 52.4%-ով՝ կազմելով 209113: «ԱրՔա» պլաստիկ քարտերի քանակը ավելացել է 65.7%-ով և կազմել 92283, իսկ տրամադրված միջազգային քարտերի քանակը՝ 42.4%-ով և կազմել 116830: Այդ թվում՝ «Visa» միջազգային քարտերի քանակը ավելացել է 44.4%-ով և կազմել 90733, իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերի քանակը՝ 100%-ով և կազմել 11813: ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից տրամադրված (շրջանառության մեջ գտնվող) քարտերի կառուցվածքում «ԱրՔա» քարտերի տեսակարար կշիռը կազմել է 44.1%, «Visa» և «Master Card» միջազգային քարտային համակարգերի քարտերինը՝ համապատասխանաբար 43.4% և 5.7%, իսկ մնացած 6.8%-ը կազմել են միջազգային այլ քարտային համակարգերի քարտերը, որոնցում ընդգրկված են նաև HSBC debit քարտերը:

Տարվա ընթացքում քարտերով իրականացված գործառնությունների ծավալում «ԱրՔա» քարտերի միջոցով իրականացվել է 1408.9 հազար գործառնություն՝ մոտ 45.5 մլրդ դրամ ծավալով, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 63.4%-ով: «ԱրՔա» քարտերով իրականացված գործառնությունները կազմել են քարտերով ընդհանուր գործառնությունների ծավալի 32. 9%-ը և քանակի 46.5%-ը:

Քարտերով կատարվող գործառնությունների ծավալում գերակշռող մասնաբաժին ունեն Visa միջազգային քարտերով գործառնությունները՝ 43.8%: Visa միջազգային քարտերով իրականացվել է 60.5 մլրդ դրամ ծավալով 100.8 հազար գործառնություն, իսկ MasterCard միջազգային քարտերով՝ 12.7 մլրդ դրամ ծավալով գործառնություն, որոնց քանակը կազմել է 169.5 հազար: Visa միջազգային քարտերով իրականացված գործառնությունների ծավալը ավելացել է 52.8%-ով (քանակը՝ 45.7%-ով), MasterCard միջազգային քարտերով կատարված գործառնությունների ծավալը՝ 64.7%-ով (քանակը՝ 88.5%-ով):

2006 թ. ընթացքում քարտապանների կողմից ինտերնետ միջավայրում իրականացվել է 258 մլն դրամի 31.5 հազար գործառնություն: Այդ թվում՝ ինտերնետ միջավայրի էլեկտրոնային առևտրում ընդգրկված առևտրի կետերի միջոցով հաշվետու ժամանակահատվածում կատարվել է մոտ 161 մլն դրամի 29.6 հազար գործառնություն և 97 մլն ՀՀ դրամի՝ քարտից քարտ փոխանցումներ (քանակը կազմել է 1.9 հազար):

«ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի զարգացման շրջանակներում մշակվում է քարտային հաշիվներին ԱԳՄ-ների միջոցով կանխիկ միջոցներ մուտքագրելու հնարավորությունը:

Ֆիզիկական անձանց փոխանցումները, առանց բանկային հաշվի բացման, կատարվում են ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված՝ դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով: Ընդհանուր առմամբ, առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով ֆիզիկական անձանց ուղղված դրամական փոխանցումները կազմել են 510 մլրդ դրամ, իսկ արտասահման կատարված փոխանցումների ծավալը՝ 321 մլրդ դրամ:

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի միջոցով Հայաստանի Հանրապետությունից կատարված փոխանցումների ընդհանուր ծավալը ավելացել է 18.1%-ով՝ կազմելով 38.5 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 88.0%-ով՝ կազմելով 95.5 հազար: Բանկերի միջոցով Հայաստանի Հանրապետություն կատարված փոխանցումների ծավալը ընդհանուր առմամբ ավելացել է 29.2%-ով (ստացումների ընդհանուր ծավալը կազմել է 315.5 մլրդ դրամ), իսկ քանակը՝ 29.0%-ով (ստացումների ընդհանուր քանակը՝ 1253637): Հաշվետու ժամանակահատվածում

WESTERN UNION, MONEY GRAM, ANELIK, UNISTREAM, BISTRAYA POCHTA և այլ համակարգերով ստացումներում գերակշռում են UNISTREAM համակարգով փոխանցումները (ընդհանուր ծավալի 47.3%-ը և քանակի՝ 33.9%-ը): Առանձնանում են նաև WESTERN UNION և ANELIK համակարգերով ստացումները, որոնց ծավալները համապատասխանաբար կազմել են 13.1% և 12.9% (քանակը՝ 17.03% և 18.35%): BISTRAYA POCHTA համակարգով փոխանցումները կազմել են ընդհանուր ծավալի մոտ 12.1%-ը (քանակը՝ 13.1%), իսկ մնացյալը կազմել են CONTACT, MONEY GRAM և այլ համակարգերով փոխանցումները:

SWIFT-ի միջոցով իրականացված փոխանցումներում ֆիզիկական անձանց ուղղված վճարումները նվազել են 5.9%-ով և կազմել մոտ 189 մլրդ ՀՀ դրամ:

Դրամական փոխանցում իրականացնող 3 կազմակերպությունները 2006 թ. Հայաստանի Հանրապետության իրենց հաճախորդներին կատարել են 5.3 մլրդ դրամի վճարում, իսկ արտասահման՝ 1.1 մլրդ դրամի փոխանցում: Վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 117 հազար դրամ:

31.12.2006 թ. դրությամբ SWIFT-ին անդամակցում են ՀՀ տարածքում գործող 21 առևտրային բանկեր, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկը: Տարվա ընթացքում SWIFT-ի միջոցով Հայաստանի Հանրապետություն իրականացված փոխանցումները նախորդ տարվա համեմատ նվազել են՝ ծավալը՝ 36.7%-ով, իսկ քանակը՝ 3.0%-ով: Հաշվետու ժամանակահատվածում արտասահման փոխանցումների ծավալը նվազել է 29.7%-ով, իսկ քանակն ավելացել 2.9%-ով:

ՀՀ տարածքում գործող որոշ առևտրային բանկերի կողմից հաճախորդներին մատուցվում են ծառայություններ բանկային հեռահար սպասարկման համակարգերի (PC banking, Internet-banking, Telebanking՝ mobile phone, Home-banking) միջոցով: Այս համակարգերը հաճախորդներին թույլ են տալիս ոչ միայն ստանալ տեղեկատվություն իրենց հաշվի մասին, այլ նաև իրականացնել հաշվի կառավարում՝ ներկայացնելով բանկին հանձնարարականներ:

2006 թվականի ընթացքում բանկային հեռահար սպասարկման համակարգերի միջոցով հաճախորդների նախաձեռնած վճարումների ծավալը կազմել է 249.2 մլրդ դրամ:

Վճարահաշվարկային բնագավառի զարգացման և իրավական կարգավորման հետ կապված՝ ՀՀ կենտրոնական բանկը նախատեսում է 2007 թվականի ընթացքում իրականացնել անկանխիկ վճարումների զարգացման, վճարային համակարգերի կարգավորման և հսկողության, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների մշակման աշխատանքներ:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ՀՀ ֆինանսական համակարգի կայուն զարգացման և առողջ մրցակցային միջավայրի ամրապնդման նպատակով 2007 թվականին Կենտրոնական բանկը կիրականացնի մի շարք քայլեր: ՀՀ ֆինանսական համակարգի կայունության և ֆինանսական համակարգի սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից Կենտրոնական բանկն իր առջև դրված խնդիրներից կարևորելու է նոր վերահսկողական համակարգի ներդրման գործընթացը: Ֆինանսական միջնորդության ընդլայնման համատեքստում Կենտրոնական բանկի կողմից կարևորվելու է բանկային, արժեթղթերի, ապահովագրության շուկաների համահունչ զարգացման նախադրյալների ապահովումը, ինչպես նաև կենսաթոշակային համակարգի բարեփոխումների նպատակով իրականացվող աշխատանքներում ակտիվ մասնակցությունը:

Վերահսկողական համակարգի կատարելագործում

2007 թվականին ՀՀ կենտրոնական բանկն էապես վերանայելու է վերահսկողական համակարգը և նոր վերահսկողական համակարգի ներդրման աշխատանքներ է սկսելու: Ներկայիս մոդելն իրենից ներկայացնում է ֆինանսական համակարգի վերահսկողություն՝ ըստ բաղադրիչ կառույցների (բանկեր, ապահովագրական ընկերություններ, արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձինք): Նոր վերահսկողական համակարգը ենթադրում է ֆունկցիոնալ կարգավորման/վերահսկողության մոդել, ըստ որի՝ հստակ տարանջատվելու են կանխարգելիչ (prudential) և շուկայի կառավարման (market conduct) ու ֆինանսական համակարգի սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված կարգավորման/վերահսկողության գործառույթները: Նոր վերահսկողական համակարգի անցման շրջանակներում 2007 թվականին նախատեսվում է մշակել սպառողների շահերի պաշտպանության միջոցառումների հստակ ծրագիր, որը կոչված է նպաստելու ֆինանսական շուկայի նկատմամբ վստահության բարձրացմանը և ֆինանսական միջնորդության մակարդակի ընդլայնմանը:

Կենտրոնական բանկը նախատեսում է աշխատանքներ իրականացնել սպառողների տարբեր հատվածների համար ֆինանսական ծառայությունների հասանելիության և որակի ապահովման ուղղությամբ: Կենտրոնական բանկը մշակելու է վարկանիշների ձևավորման մեթոդաբանություն, և գնահատման արդյունքների հիման վրա ֆինանսական կազմակերպություններին շնորհվելու են վարկանիշներ, որոնք էլ պարբերաբար հրապարակվելու են:

Ֆինանսական համակարգի վերահսկողության մոտեցումներում վերոնշված կառուցվածքային փոփոխությունների հետ կապված՝ 2007 թվականին նախատեսվում է ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողական գործառույթը կարգավորող ակտերի վերանայում, համապատասխան փոփոխությունների կատարում, նոր ակտերի մշակում: Նախատեսվում է նաև վերահսկողական նոր կադրերի ընդունման, գործող կադրերի որակավորման բարձրացման նկատմամբ լրացուցիչ պահանջների, ստանդարտների մշակում և ներդրում:

Ֆինանսական համակարգի զարգացմանն ուղղված միջոցառումներ

01.01.2006 թվականից ՀՀ կենտրոնական բանկը ստանձնեց նաև ապահովագրության և արժեթղթերի հատվածների կարգավորման ու վերահսկողության իրականացումը: Ներկայումս էապես կարևորվում է բանկային, արժեթղթերի, ապահովագրության շուկաների համահունչ զարգացումների ապահովումը: 2006 թվականին ԿԲ կողմից մշակված «Ապահովագրության մասին» և «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքների փոփոխությունները կոչված են կարգավորելու և վերաիմաստավորելու այս երկու շուկաների զարգացման քաղաքականությունները:

Ապահովագրության շուկայի հատված

2007 թվականին կշարունակվեն Հայաստանում ապահովագրական շուկայի զարգացման և վերահսկողության բարեփոխումների հայեցակարգի ներքո 2006 թվականից սկսված աշխատանքները: Նախատեսվում է ՀՀ ապահովագրական ոլորտի օրենսդրության համապատասխանեցում եվրոպական ստանդարտներին և Ապահովագրողների վերահսկող մարմինների միջազգային ասոցիացիայի կողմից մշակված ստանդարտներին, ինչպես նաև ապահովագրական շուկայի բնականոն գործունեության համար անհրաժեշտ ինստիտուտների՝ ակտուարների, ապահովագրական դեպքերի գրանցման և գնահատման ենթակառուցվածքների ներդրում և դրան զուգահեռ՝ համարժեք վերահսկողության և կարգավորման դաշտի ձևավորում:

ՀՀ կառավարությանը 2007 թվականին ներկայացվելու է «Ապահովագրության մասին օրենքի» նոր նախագիծ, որում լուծումներ կտրվեն մի շարք խնդիրների, որոնք հստակ չեն կարգավորվում կամ ընդհանրապես բացակայում են «Ապահովագրության մասին» ՀՀ գործող օրենքում:

2007 թվականին նախատեսվում է շարունակել ապահովագրական շուկայի արդյունավետ գործունեությունն ապահովող ենթակառուցվածքների ներդրման աշխատանքները, որոնք պարտադիր ապահովագրության ներդրման անհրաժեշտ նախապայման են: Մասնավորապես մշակվում են և կներդրվեն՝

- ապահովագրության ոլորտում ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքերի գրանցման նախագիծը, որով, համակարգի նկատմամբ պոտենցիալ ապահովադիրների վստահությունը բարձրացնելու նպատակով, սահմանվելու են հստակ ու արդյունավետ ընթացակարգեր,
- ապահովագրական վիճակագրական կենտրոնի ստեղծումը, ինչը կնպաստի ապահովագրական ռիսկերի գնահատման և կառավարման, սակագների սահմանման համար վստահելի տվյալների բազայի ստեղծմանը,
- ակտուարների ինստիտուտի նախագիծը. նպատակն է ձևավորել, կրթել և զարգացնել ակտուարական մասնագիտությունը Հայաստանում,
- գնահատողների ինստիտուտի ներդրումը. կձևավորի ապահովագրական ռիսկերի գնահատման և պատճառված վնասի փոխհատուցման արդար գին:

Ապահովագրության ոլորտի զարգացման հիմնական ուղղություններից կշարունակի լինել նաև կարգավորման և վերահսկողության համապատասխան դաշտի ձևավորումը: 2006 թվականին Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվել են նոր հաշվապահական հաշվառման հաշվային պլանը և դրա կիրառման հրահանգը, նոր նորմատիվային և պահուստների ձևավորման կանոնակարգերը, ապահովագրական սակագների հիմնավորման կարգը, ապահովագրողների կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ներկայացման և լրացման կարգը, ապահովագրողների կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման ցուցումները: Վերջիններն ուժի մեջ կմտնեն 2007 թվականին: 2007 թվականին նախատեսվում է վերանայել ապահովագրական գործակալների գործունեության օրինակելի կանոնակարգի, ինչպես նաև ապահովագրական բրոքերների կողմից վերահսկողական նպատակներով ԿԲ ներկայացվող հաշվետվությունների նկատմամբ պահանջները:

Վերահսկողության կատարելագործման և ռիսկերի բացահայտման տեսանկյունից, 2007 թվականին կարևորվելու են ապահովագրական ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման վաղ ահազանգման գործիքների, ինչպես նաև վերահսկողների կողմից ստուգումների իրականացման ձեռնարկների մշակման և ներդրման խնդիրները: 2007 թվականին կշարունակվեն եվրոպական և Ապահովագրողների վերահսկող մարմինների միջազգային ասոցիացիայի (IAIS) կողմից ընդունված ստանդարտներին տեղական ապահովագրական ընկերությունների և միջնորդների գործունեության կարգավորման և վերահսկողության դաշտի համապատասխանեցման աշխատանքները: Օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի փոփոխություններին համահունչ՝ վերանայվելու են ապահովագրական գործունեություն իրականացնողների ղեկավարների որակավորման ստուգման թեստերը:

Արժեթղթերի շուկայի հատված

2007 թվականին արժեթղթերի շուկայից օգտվողների թվի ավելացման ռազմավարության ներքո Կենտրոնական բանկի կողմից կիրականացվեն արժեթղթերի շուկայի զարգացմանը նպաստող մի շարք միջոցառումներ:

Կենտրոնական բանկը շարունակելու է շվեդական բորսայի օպերատոր O - էմ - էքս-ի (OMX) հետ Հայաստանի արժեթղթերի շուկայի զարգացման հեռանկարների ուսումնասիրության և զարգացման առաջարկությունների ծրագրի իրականացումը:

Ամփոփվելու են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման աշխատանքները: Նոր օրենքի հրատապությունը պայմանավորված է կարգավորման դաշտը եվրոդիրեկտիվներին համապատասխանեցնելու, ինչպես նաև արժեթղթերի շուկայի զարգացմանը նպաստող քաղաքականության իրականացման անհրաժեշտությամբ:

2007 թվականին կշարունակվի ՀՀ կենտրոնական բանկի՝ արժեթղթերի շուկայի զարգացման հայեցակարգով նախատեսված մի շարք միջոցառումների իրականացումը, որոնցից կկարևորվեն պոտենցիալ թողարկողների հետ ակտիվ աշխատանքների շարունակումը, բորսայի և կենտրոնական դեպոզիտարիայի առևտրայնացումը, արժեթղթերի շուկա բանկերի մուտքի թույլատրումը:

Արժեթղթերի շուկան կարգավորող ենթաօրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով 2007 թվականին նախատեսվելու են՝ արժեթղթերի շուկա բանկերի և վարկային կազմակերպությունների ուղղակի մուտքի ապահովումը, երկմակարդակ պահառության համակարգի ձևավորումը, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց նկատմամբ տնտեսական նորմատիվների սահմանումը, արժեթղթերի ազդագրում ներառվող տեղեկատվության կազմի (ըստ այդմ նաև՝ հաշվետու թողարկողների հաշվետվությունների) վերանայումը և մի շարք այլ փոփոխություններ: Կշարունակվեն նաև արժեթղթերի հրապարակային առաջարկի միջոցով արժեթղթերի թողարկումներ իրականացնողներին աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Բանկային շուկայի հատված

Տնտեսությունում երկարաժամկետ վարկերի նկատմամբ ձևավորված պահանջարկը բավարարելուն էապես կնպաստեն ապահովագրական շուկայի, մասնավոր կենսաթոշակային համակարգի կայացումն ու զարգացումը (վերջիններս համարվում են նաև տնտեսությունում երկարաժամկետ փող ստեղծող ինստիտուտներ): Կենտրոնական բանկը տվյալ ինստիտուտների զարգացման, ինչպես նաև, ներկայումս այս շուկաների թերզարգացածության պայմաններում, երկարաժամկետ հիփոթեքային վարկերի պահանջարկի բավարարման

քայլեր է ձեռնարկելու: 2006 թվականին բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի կառուցվածքում ամենաարագատեմպ աճը արձանագրվել է հիփոթեքային վարկերի գծով, ուստի 2007 թվականին ՀՀ կենտրոնական բանկը կշարունակի իրականացնել հիփոթեքային վարկավորման զարգացմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Մասնավորապես՝ կշարունակվեն Գերմանական զարգացման բանկի (KFW) հետ համատեղ Կենտրոնական բանկի աշխատանքները: 2007 թվականի ընթացքում Գերմանական զարգացման բանկը հիփոթեքային վարկավորման շուկայի զարգացման ծրագրի շրջանակներում ընտրված գործընկեր բանկերին և վարկային կազմակերպություններին կվերաֆինանսավորի 12 մլն եվրո գումարի չափով: 2007 թվականին ՀՀ կենտրոնական բանկը նախատեսում է իրականացնել հիփոթեքային երկրորդային շուկայի զարգացման հետ կապված աշխատանքներ. Կենտրոնական բանկի կողմից կմշակվի «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Այս օրենքի ընդունումը կարևորվում է այն տեսանկյունից, որ վերջինս հնարավորություն կտա բանկերին և վարկային կազմակերպություններին հիփոթեքային վարկերի ֆինանսավորման համար թողարկել հիփոթեքային արժեթղթեր և միջոցներ ներգրավել կապիտալի շուկայից:

ՀՀ կենտրոնական բանկը 2007 թվականին կշարունակի ՀՀ բանկային համակարգում Բազելյան երկրորդ համաձայնագրի ներդրման գործընթացը, որը կնպաստի բանկերում ռիսկերի կառավարման գործուն համակարգի ձևավորմանն ու ներդրմանը, ինչպես նաև ՀՀ առևտրային բանկերի՝ միջազգային ֆինանսական շուկաներին ինտեգրմանը: 2006 թվականին բանկերի ղեկավարների և աշխատակիցների համար կազմակերպվեցին Բազելյան երկրորդ համաձայնագրի վերաբերյալ դասընթացներ, ձևավորվեց աշխատանքային խումբ՝ կազմված բանկերի և Կենտրոնական բանկի ներկայացուցիչներից՝ համաձայնագրի ներդրման աշխատանքների կոորդինացման նպատակով: Միաժամանակ, 2006 թվականին բանկային համակարգի նորմատիվային դաշտում մշակվեցին համապատասխան փոփոխությունների նախագծերը՝ ԲԱԶԵԼ II համաձայնագրի առաջին մասի ստանդարտացված մոտեցման ներդրման հետ կապված (ռիսկի կշիռների վերանայում, շուկայական ռիսկի՝ կապիտալի համարժեքության հաշվարկում ընդգրկում)՝ գործառնական ռիսկի գնահատման մեթոդաբանության ներդրում: 2007 թվականին վերոնշյալ նորմատիվային փոփոխությունները ուժի մեջ կմտնեն:

Վճարահաշվարկային համակարգ

ՀՀ կենտրոնական բանկը նախատեսում է 2007 թվականի ընթացքում շարունակել ՀՀ վճարահաշվարկային համակարգի հսկողության իրականացման գործընթացների կարգավորման աշխատանքները: Նոր տեխնոլոգիաների ներդրման հետ կապված՝ 2007-2008 թթ.

շարունակվելու են «ԱրՔա» միասնական վճարային համակարգի շրջանակներում «խելացի» (smart card) քարտերի թողարկման պայմանների ստեղծումը և ներդրումը՝ միջազգային («Visa» և «Master Card») քարտային վճարային համակարգերի կողմից թողարկված նման քարտերի սպասարկումը ՀՀ-ում ապահովելու նպատակով, ինչն իր հերթին նոր հիմքեր է ստեղծում «ԱրՔա» վճարային համակարգում ռիսկերի նվազեցման և անվտանգության առավել պաշտպանված միջոցների կիրառման համար: «ԱրՔա» վճարային համակարգում ԱԳՄ-ները և POS-տերմինալները պրոցեսինգային կենտրոնին բջջային ցանցի միջոցով միացնելու աշխատանքներ են իրականացվում, որը թույլ կտա բարձրացնել համակարգում կապուղիների անվտանգությունը և հուսալիությունը: Նախատեսվում է նաև ԱԳՄ-ների համար ներդնել web-տեխնոլոգիաներ, որի շնորհիվ առևտրային բանկերին հնարավորություն կտրվի ԱԳՄ-ները միացնելու ինտերնետ ցանցին և ապահովելու ինտերնետ միջավայրում անկանխիկ գործառնությունների իրականացումը՝ վճարային քարտի հիման վրա ձևավորված վիրտուալ քարտի միջոցով:

Կենսաթոշակային համակարգի բարեփոխումներ

ՀՀ կենտրոնական բանկը 2007 թվականին կշարունակի կենսաթոշակային համակարգի բարեփոխումների հետ կապված աշխատանքներին իր ակտիվ մասնակցությունը:

Բարեփոխված համակարգի ներդրման նպատակը կենսաթոշակային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացումն է, ֆինանսական համակարգի հետագա ընդլայնումն ու զարգացումը՝ ֆինանսական միջնորդության մակարդակի բարձրացման, տնտեսությունում երկարաժամկետ միջոցների ձևավորման միջոցով:

Ֆինանսական կայունության համակարգ

2006 թվականի հունվարի 1-ից ՀՀ կենտրոնական բանկը ստանձնեց ամբողջ ՀՀ ֆինանսական համակարգի վերահսկողությունը՝ առավելապես կարևորելով ՀՀ ֆինանսական կայունության ապահովման խնդիրը: Վերջին տարիներին շատ երկրներ, ֆինանսական համակարգի առանձին բաղկացուցիչների ուսումնասիրությունից զատ, մեծ ուշադրություն են դարձնում նաև երկրի ընդհանուր ֆինանսական համակարգի զարգացումներին՝ կապված միջազգային շուկային ինտեգրման և համապատասխան ֆինանսական գործիքների կիրառման հետ: Տնտեսության ընդհանուր ֆինանսական համակարգի կայունությունը կարող են խաթարել ներքին և արտաքին տնտեսություններից (գործընկեր երկրներից) բխող բազմապիսի ռիսկեր: Ֆինանսական կայունության ապահովման համատեքստում կարևորվում է

ինչպես ֆինանսական հատվածում, այնպես և մակրոտնտեսության բոլոր հատվածներում (իրական, հարկաբյուջետային, արտաքին) առաջացող ռիսկերի մանրամասն ուսումնասիրությունը:

ՀՀ կենտրոնական բանկի «Ֆինանսական համակարգի կայունության ապահովման կառուցվածքի հայեցակարգի» ներքո 2007 թվականին կշարունակվեն ֆինանսական համակարգի մասնակիցների գործունեությունից առաջացող ռիսկերի, ներքին և արտաքին տնտեսություններից բխող ռիսկերի բացահայտման և համալիր ուսումնասիրության, ինչպես նաև ֆինանսական կայունության տեսանկյունից դրանց ազդեցության մակարդակի գնահատման աշխատանքները: Ֆինանսական համակարգի գործունեության կայունության ապահովման նպատակով 2007 թվականին Կենտրոնական բանկը կշարունակի իր աշխատանքները բանկային, ապահովագրական, արժեթղթերի շուկաների, ինչպես նաև ֆինանսական համակարգի այլ մասնակիցների վերահսկողության և կարգավորման ուղղությամբ:

Ֆինանսական համակարգի կայունության ապահովումը չի սահմանափակվում վերահսկողական խնդիրների շրջանակներում, այլ պահանջում է նաև ֆինանսական համակարգի կայունությունը վտանգող հնարավոր ռիսկերի բացահայտման և դրանց անթույլատրելի մակարդակների կանխարգելման միջոցառումներ:

Հավելված 1

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը, դրանց մասնաճյուղերը

Առևտրային բանկեր		Մասնաճյուղեր	
		31.12.2005	31.12.2006
1	ՎՏԲ Հայաստան բանկ	101	98
2	Արդշինինվեստբանկ	51	51
3	Հայէկոնոմբանկ	39	43
4	«Արցախ» բանկ	12	14
5	«Կոնվերս» բանկ	16	16
6	ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ	12	16
7	Յունիբանկ	17	27
8	«Անելիք» բանկ	6	8
9	Առէկսիմբանկ	4	8
10	«Ինեկո» բանկ	4	4
11	«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան»	1	2
12	«Պրոմեթեյ» բանկ	3	2
13	Հայներարտբանկ	-	-
14	Զարգացման հայկական բանկ	-	-
15	Հայբիզնեսբանկ	-	1
16	«Մելլաթ» բանկ	-	-
17	Կասկադ բանկ	-	-
18	«ԻԹԲ» միջազգային առևտրային բանկ	2	4
19	ԲՏԱ ինվեստ բանկ	1	2
20	Արարատ բանկ		3
21	Արմսվիսբանկ	-	-
Ընդամենը		**269**	**299**

Հավելված 2

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշներ

(հազար ՀՀ դրամ)

	Ցուցանիշներ		31.12.04	31.12.05	Փոփոխությունը 31.12.06-31.12.05	31.03.06	Փոփոխությունը 31.03.06-31.12.05	30.06.06	Փոփոխությունը 30.06.06-31.03.06
			1	2	3	4	5	6	7
Ակտիվներ	Կանխիկ դրամական միջոցներ	Դ	6964968	11193271	60.7%	10997879	-1.7%	10118885	-8.0%
		Ա	17745627	15791693	-11.0%	17181777	8.8%	16692757	-2.8%
	Թղթակցային հաշիվներ ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ	Դ	27686319	28684125	3.6%	23258440	-18.9%	20839820	-10.4%
		Ա	0	22322722	100.0%	24679181	10.6%	24367702	-1.3%
	Թղթակցային հաշիվներ բանկերում և այլ պահանջներ բանկերի նկատմամբ	Դ	2740070	1433294	-47.7%	1742844	21.6%	5057676	190.2%
		Ա	99469659	67970937	-31.7%	70290158	3.4%	55399630	-21.2%
	Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Դ	2116767	5215286	146.4%	5644376	8.2%	6997543	24.0%
		Ա	4722095	2585819	-45.2%	1993234	-22.9%	2162494	8.5%
	Պետական արժեթղթեր		36596314	65576558	79.2%	75993943	15.9%	74985230	-1.3%
	Պարտավորություններ ռեպո համաձ. ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոպով ձեռք բերված արտարժույթի գծով	Դ	-4236986	-6239541	47.3%	-7509982	20.4%	-10373395	38.1%
		Ա	0	0	-	-313576	100.0%	-275928	-12.0%
	Ռեպո համաձայնագրեր (առանց միջբանկային ռեպոների)	Դ	0	0	-	598644	100.0%	300307	-49.8%
		Ա	0	0	-	0	-	0	-
	Վարկեր իրավաբանական անձանց	Դ	27530658	40484971	47.1%	42373733	4.7%	47986799	13.2%
		Ա	51691888	63731078	23.3%	66552484	4.4%	66355290	-0.3%
	Վարկեր ֆիզիկական անձանց	Դ	10863202	23966654	120.6%	24136770	0.7%	29478126	22.1%
		Ա	38544218	49823289	29.3%	57414087	15.2%	61352229	6.9%
	Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին	Դ	1468646	2532112	72.4%	2224529	-12.1%	2513617	13.0%
		Ա	2227656	3484976	56.4%	2962531	-15.0%	3162381	6.7%
	Ակտիվների հնարավոր կորուստների ծածկման պահուստներ		-3805466	-3413727	-10.3%	-3888625	13.9%	-4073121	4.7%
	Հաշվարկված ստացվելիք տոկոսներ		2112345	2700113	27.8%	3056334	13.2%	2947277	-3.6%
	Հիմնական միջոցներ		21955413	25013801	13.9%	25921121	3.6%	28048099	8.2%
	Այլ արժեթղթեր		3962181	999245	-74.8%	1427492	42.9%	1462958	2.5%
	Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկային լիզինգի և ֆակտորինգի)		4761969	3781838	-20.6%	3942142	4.2%	4035379	2.4%
	Այլ ակտիվներ		8430001	12827709	52.2%	15472804	20.6%	15636180	1.1%
	Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ		**363567544**	**440674145**	**21.2%**	**466152320**	**5.8%**	**465177935**	**-0.2%**

				1	2	3	4	5	6	7
Պարտավորություններ	Բանկերի թղթակցային հաշիվներ		Դ	286086	353082	23.4%	392977	11.3%	2527263	543.1%
			Ա	5733448	4621770	-19.4%	3846595	-16.8%	3653600	-5.0%
	Այլ պարտավորություններ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ)		Դ	16056501	14212362	-11.5%	16099324	13.3%	19007091	18.1%
			Ա	13169228	24172463	83.6%	24651280	2.0%	32286902	31.0%
	Ցպահանջ պարտավորություններ իրավաբանական անձանց նկատմամբ		Դ	28561688	50376433	76.4%	47682416	-5.3%	50255062	5.4%
			Ա	52167290	42160840	-19.2%	60302917	43.0%	43834955	-27.3%
	Ցպահանջ պարտավորություններ ֆիզիկական անձանց նկատմամբ		Դ	6490154	10277819	58.4%	10470385	1.9%	11892939	13.6%
			Ա	48357694	42300069	-12.5%	44677353	5.6%	43281349	-3.1%
